

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՃՈՒՇԱՆ ԱՍԿԱՐՅԱՆ

Արտասահմանյան

Ժողովախառնակ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ



ՇՈՒՇԱՆ ԱՍԿԱՐՅԱՆ

**ԱՐՏԱՍԱՐՅՄԱՆՅԱՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ**

(Ուսումնամեթոդական ձեռնարկ)

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ 2017

ՀՏԴ 070(07)
ԳՄԴ 76.01g7
Ա 745

*Տպագրվում է Արցախի պետական
համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագիր՝ Բ.Գ.Ք., դոցենտ, Ա.Ռ.Մենենջյան
Գրախոս՝ Բ.Գ.Դ., պրոֆեսոր, Դ.Վ.Պետրոսյան

Ասկարյան Շ.
Ա 745 Արտասահմանյան ժուռնալիստիկա: Ուսումնամեթոդական
ձեռնարկ / Շուշան Ասկարյան; Խմբ.՝ Ա. Ռ. Մենենջյան.-
Ստեփանակերտ: «Դիզակ պլուս» հրատ., 2017.
Մաս առաջին.- 94 էջ:

Ձեռնարկում փորձ է արվել ներկայացնելու արտասահմանյան
ժուռնալիստիկայի անցած ուղին՝ ժամանակակից ժուռնալիստական
մասնագիտական գրականության տարբեր դասագրքերում և ձեռնարկ-
ներում եղած կարծիքների հետ համադրության միջոցով: Գիրքը նա-
խատեսված է ուսանողների, դասախոսների և բոլոր նրանց համար,
ովքեր հետաքրքրված են արտասահմանյան ժուռնալիստիկայի
ուսումնասիրության հարցերով:

ՀՏԴ 070(07)
ԳՄԴ 76.01 g7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասընթացի նշանակությունը.....	5
Դասընթացի նպատակը.....	5
Դասընթացի կառուցվածքը.....	5
Դասախոսությունների համառոտագիր.....	6
ԹԵՄԱ 1	
Ժուռնալիստիկայի ակունքները. անտիկ ժամանակաշրջան.....	6
ԹԵՄԱ 2	
Միջնադարյան և Վերածննդի դարաշրջանի հրապարակախոսական միտքը.....	9
ԹԵՄԱ 3	
Գրատպությունն որպես տեղեկատվական միջոցների զարգացման տեխնիկական գործոն.....	12
ԹԵՄԱ 4	
15-16-րդ դարերի ձեռագիր հրատարակությունները.....	16
ԹԵՄԱ 5	
Առաջին թերթերը.....	19
ԹԵՄԱ 6	
Լուսավորչական լրագրություն: Առաջին ամսագրերը: Անհատական ժուռնալիզմ.....	24
ԹԵՄԱ 7	
17-18-րդ դարերի անգլիական քաղաքական լրագրությունը, պամֆլետային հրապարակախոսություն.....	32
ԹԵՄԱ 8	
Մամուլի ազատության անգլիական կոնցեպցիան.....	36
ԹԵՄԱ 9	
Տպագրություն և գրաքննություն: Հակամարտություններն ու խնդիրները: Վիզերի և տորիների պայքարը.....	39

ԹԵՄԱ 10	
Լրագրության առաջացումը Հյուսիսային Ամերիկայի անգլիական գաղութներում 18-րդ դարի առաջին կեսերին.....	44
ԹԵՄԱ 11	
Արևմտյան Եվրոպայի երկրների ՁԼՄ-ների ստեղծման պատմությունը և արդի փուլը: Մեծ Բրիտանիայի ՁԼՄ-ների ստեղծման պատմությունը և արդի փուլը.....	50
ԹԵՄԱ 12	
Ֆրանսիայի ՁԼՄ-ների ստեղծման պատմությունը և արդի փուլը.....	55
ԹԵՄԱ 13	
Գերմանիայի ՁԼՄ-ների ստեղծման պատմությունը և արդի փուլը.....	59
ԹԵՄԱ 14	
Ավստրիայի և Շվեյցարիայի ՁԼՄ-ների ստեղծման պատմությունը և արդի փուլը.....	61
ԹԵՄԱ 15	
Իտալիայի և Իսպանիայի ՁԼՄ-ների ստեղծման պատմությունը և արդի փուլը.....	64
ԹԵՄԱ 16	
Սկանդինավյան երկրների ՁԼՄ-ների ստեղծման պատմությունը և արդի փուլը.....	68
Ինքնուրույն աշխատանքների թեմաներ.....	72
Քննական թեստեր.....	74
Քննական թեստերի ճիշտ պատասխանները.....	90
Գրականություն.....	91

1. Դասընթացի նշանակությունը

«Արտասահմանյան ժուռնալիստիկա» դասընթացային ծրագիրը նախատեսված է «լրագրություն» մասնագիտության բակալավրի սովորողների, լրագրության ուղղվածության ուսանողների և մասնագետների համար:

Տեսական նյութը տրվում է ինքնուրույն առաջադրանքների և թեստերի զուգորդմամբ:

2. Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արտասահմանյան երկրների ժուռնալիստիկայի պատմությանը:

Դասընթացային ծրագիրը կազմված է հիմք ընդունելով արտասահմանյան ժուռնալիստիկայի համընդհանուր և արդի պահանջները և նախատեսված է ուսանողին զինելու հիմնարար գիտելիքներով՝ զարգացնելով նրա մասնագիտական կարողությունները:

3. Դասընթացի կառուցվածքը

ա/ դասախոսությունների համառոտագիր

բ/ ինքնուրույն աշխատանքների թեմաներ

գ/ քննական թեստեր

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԹԵՄԱ 1 **ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ.** **ԱՆՏԻԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ** **(4 ժամ դասախոսություն)**

1. Ժուռնալիստիկան որպես տեղեկատվական գործունեության հատուկ ձև:
2. Անտիկ ժամանակաշրջանի տեղեկատվական կապերը, դրանց տեսակները, մեթոդները և առանձնահատկությունները:
3. Տեղեկատվական հասարակության ծագման և զարգացման պատմությունը:
4. Անտիկ ժամանակաշրջանի նախաժուռնալիստական երևույթները:

Նախաժուռնալիստական երևույթները զարգացել են աստիճանաբար: Տեղեկատվական շփումն առաջացել է աշխատանքային գործունեության ու լեզվի զարգացման հետ, որն անխզելիորեն կապված էր ընդհանուր աշխատանքային գործունեության պլանավորման հետ: Հաջորդ փուլը հանրային կարծիքի ձևավորումն էր: Պետականության առաջացման հետ բարդանում էին հասարակական կյանքի ձևերը, տեղի էր ունենում աշխատանքի տարաբաժանում, ձևավորվում էին քաղաքական ինստիտուտները: Հանրային տեղեկատվության տարածման գործում կարևոր դերակատարում ունեին հռետորները: Հնագույն ժամանակների մեծ հռետորների` Դեմոսթենեսի (Հունաստան) և Ցիցերոնի (Հռոմ) քաղաքական գործունեությունը հանրության վրա նպատակային տեղեկատվության տարածման վառ դրսևորում էր, որի նպատակը գաղափարական-հոգեբանական ազդեցություն գործելն էր, ինչպես նաև տեսակետների, ձգտումների ձևավորումը, այս կամ այն գործողությունների կանխատեսումը կամ մղումը: Տարեգիրքը կարելի է համարել առաջին պարբերական հրատարակությունը: Այն «սպիտակ տախտակ» էր, որը տեղեկատվություն էր պարունակում քաղաքացիների համար և տեղադրվում Հին Հռոմի գերագույն քահանայապետի տան մոտ: Սկզբնական շրջանում տեղեկությունները վերաբերում էին օրացուցային փոփոխություններին, այդ իսկ պատճառով էլ դրանք կոչվում էին «տարեգիրք»: Ավելի ուշ տեղեկությունների թեմատիկան դարձավ առավել ընդգրկուն, և տարեգրքերը վերածվեցին ժամանա-

կազրության. տեղեկություններ պատերազմների, բնական աղետների, ներքաղաքական իրադարձությունների, սենատի, ընտրությունների և եղանակի մասին: Մ. թ. ա. 130 թվականին հրատարակվել են «Մեծ տարեգրքեր». դրանք եղանակի տեսության մասին 80 գրքեր էին: Ըստ եության, «տարեգրքերը» կարելի է համարել ժամանակակից թերթերի նախատիպերը:

Ժուռնալիստիկայի կարևորագույն ակունքները, հատկապես եվրոպական, պետք է փնտրել Հին Հունաստանում և Հռոմում, դրանց զանգվածային հաղորդակցության բազմապիսի և վառ արտահայտված դրսևորումներում, որոնք ձևավորել են ինչպես զանգվածային գիտակցություն, այնպես էլ հանրային մտածողություն և աշխարհայացք: Դրանք են՝ առասպելները, պոեզիան, թատրոնը, պատմական արձակը, հռետորական արվեստը, գիտությունը:

Նախաժուռնալիստական երևույթները բաժանվում են երկու խմբի՝ գրավոր և բանավոր: Բանավոր նախաժուռնալիստական երևույթներ էին միջանձնային և խմբային հաղորդակցումը, ծիսակատարությունները, հռետորական արվեստը, ազդարարների, սուրհանդակների և պատգամաբերների միջոցով իրազեկումը:

Գրավոր նախաժուռնալիստական երևույթներ են ծիսական հաղորդակցումը (թաղման ժեսերը, տապանագրերը), ձեռագիր գրքերը, հնագույն ձեռագիր «թերթերը» («տարեգրքերը», «Acta Senatus» և «Acta diurna populi Romani»), նամակագրական արվեստը, ժամանակագրությունը:

Մ. թ. ա. առաջին դարը Հռոմում ճարտասանական արվեստի ծաղկունքի դարաշրջան էր: Մեծն ճարտասան Ցիցերոնը աչքի ընկավ ոչ միայն փայլուն դատական և քաղաքական ճառերով, այլ նաև վերոնշյալ ոլորտներում տեսական աշխատությունների հեղինակությամբ: «Հռետորի մասին» երկխոսության մեջ Ցիցերոնը պնդում էր, որ. «Բովանդակության վերագտնման համար ճարտասանին անհրաժեշտ է երեք բան՝ խորաթափանցություն, ըմբռնում և գիտություն»: Ցիցերոնը և այլ հռետորներ ոչ միայն հրապարակայնորեն արտասանում էին իրենց ճառերը, այլ նաև հրապարակում: Հռետորական արվեստի նշանակության մասին է խոսում գրաքննության հրամանագրի ընդունումը, որն ուղղված էր հռետորական դպրոցներում ուսուցման որակի բարելավմանն ու շտկմանը: Իհարկե, հռետորական արվեստը, հաղորդակցության ձևերը և շրջապատի վրա ազդեցությունը կարևոր նշանակություն են ունեցել ոչ միայն ժուռնալիստիկայի, այլև նրա կենսագործունեության մյուս ձևերի զարգացման համար: Հասարակության զար-

զացման ավելի ուշ փուլերում փորձեր էին կատարվում տեղեկատվության տարածման և գրության միջոցով հանրությանը զվարճացնելու: Յուլիոս Կեսարի ղեկավարման ժամանակաշրջանում և նրա անմիջական կարգադրությամբ Հին Հռոմում պարբերաբար հրատարակվում էին սենատի նիստի արձանագրությունները: Այս արձանագրությունները հիմք հանդիսացան «Acta Senatus» յուրատիպ պարբերականի ստեղծման համար: Ժամանակակից լեզվով՝ դրանք հռոմեական խորհրդարանի նիստերի արձանագրություններն էին: Որոշ ժամանակ անց Կեսարը հրաման արձակեց ավելի զանգվածային հրատարակության «Acta Diurna»-ի («Ամենօրյա լրատու») ստեղծման համար, որը բազմացվում էր փորձառու արտագրողների կողմից, իսկ ներկայացված տեղեկատվությունը ոչ միայն պաշտոնական բնույթի էր, այլև արտացոլում էր հասարակական հնչեղության հիմնախնդիրներ, գեղարվեստական ստեղծագործություններ, հումոր, գլադիատորական մարտերի արդյունքներ և այլն: Վերոնշյալ թերթերի համարներից ոչ մեկը մեզ չի հասել, սակայն դրանց գոյության մասին մենք կարող ենք դատել հռոմեացի գրողների ստեղծագործություններից, որոնցում հաճախ էր հիշատակվում դրանց մասին:

Հրատարակախոսական գործունեության վերելքը առավելապես ակնհայտ էր իշխանության համար մղվող պայքարի սրացման շրջափուլերում: «Acta Senatus»-ի տարածումը արգելվեց հռոմեական կայսրության շրջանում Տիբերիոս կայսեր կողմից այն ժամանակ, երբ եղան պետական դավաճանության, դեպքեր, և Սենատում հնչեցվեցին կայսեր անձին կամ ընտանիքի անդամներին վերաբերող մեղադրական ելույթներ. նման բովանդակության լրատվության տարածումը բռնակալների հետաքրքրությունների շրջանակում չէր տեղավորվում: «Acta diurna populi Romani»-ն գոյություն է ունեցել մինչև գերմանական ցեղախմբերի ներխուժումը հռոմեական կայսրության տարածք, այսինքն՝ մինչև հռոմեական մշակույթի անկումը և քրիստոնեական հավատքի տարածումը: Համարվո՞ւմ են արդյոք մ. թ. ա. 222-59 թթ. գոյություն ունեցած ակտաները ժուռնալիստիկայի նախատիպ՝ որպես մարդու գործունեության նախատիպ, թերևս՝ ոչ: Չնայած այն հանգամանքին, որ դրանք ունեին պարբերականություն և քանակ, դրանց գոյությունը տեսականորեն ավելի ճիշտ է դիտարկել քաղաքականության և կառավարման տեսանկյունից: Նույնը կարելի է ասել 911 թվականից սկսած Պեկինում լույս տեսնող «King Pao» («Քաղաքային բանբեր») թերթի մասին, որը պարբերականությունից և տպաքանակից բացի ուներ մեկ այլ հատկանիշ ևս, ինչն ավելի մոտ էր ժուռնալիստիկային.

այն ստեղծվում էր տպագրական հաստոցի միջոցով: Ինչպես հայտնի է, չինացիները եվրոպացիներից ավելի շուտ են հայտնագործել թուղթը և տպագրական հաստոցը, չնայած ժուռնալիստիկային վերագրվում է եվրոպական ծագում:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ի՞նչ է ժուռնալիստիկան և ո՞րն է նրա դերը հասարակական կյանքում:
2. Հին աշխարհի պատմական ո՞ր երևույթները կարելի է վերագրել նախաժուռնալիստական երևույթներին:
3. Բնութագրել Հին Հունաստանի և Հռոմի ժուռնալիստիկայի կարևորագույն ակունքները:
4. Ի՞նչ է հռետորական արվեստը և ի՞նչ դերակատարություն ուներ այն անտիկ ժամանակներում:
5. Նշել հռետորական արվեստի և ժուռնալիստիկայի ընդհանուր գծերը:
6. Որո՞նք են անտիկ ժամանակների առաջին թերթերի նախատիպերը:

ԹԵՄԱ 2

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԾՆՆԴԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ՄԻՏՔԸ (2 ժամ դասախոսություն)

1. Միջնադարի նախաժուռնալիստական հաղորդակցական գործընթացները:
2. Գրքերը, տարեգրքերը, մատենագրությունները, ձեռագրերը որպես տեղեկատվության միջոցներ:
3. Կրոն և տեղեկատվություն:
4. Համալսարանների դերը հաղորդակցական գործընթացների զարգացման գործում:
5. Առաջին ձեռագիր թերթերը:

Արևմտաեվրոպական երկրների միջնադարյան հրապարակախոսական միտքը բազմաբնույթ էր ինչպես ժանրային, այնպես էլ թեմատիկ առումներով, որն առաջին հերթին բացատրվում է «միջնադար» հասկացության ժամանակային մեծ դիապազոնով, ինչպես նաև Արևմտյան

Եվրոպային յուրահատուկ տարբեր մշակութային ավանդույթների ազգային յուրատիպությամբ:

Միջնադարյան աշխարհը ձևավորվել է անտիկ քաղաքակրթության ներսում՝ անտիկ կրոնական պաշտամունքների և գաղափարական առճակատման դուրս եկած՝ մեծ հավաքական ուժ ունեցող քրիստոնեության շրջանում: Այս պայքարը կանխորոշեց 3-4-րդ դդ. հրապարակախոսական մտքի հիմնական ուղղվածությունը: Միջնադարյան հրապարակախոսության առանձնահատկությունն այն էր, որ կոչ կար ամենակարողին՝ Սուրբ Գրությանը, եկեղեցու հայրերի կամ Արիստոտելի աշխատություններին: Միջնադարյան հրապարակախոսի թիկունքին միշտ կանգնած էր մեկը, ով ուղղորդում էր գրողին, և այդ է պատճառը, որ միջնադարյան տեքստերն ընթերցելիս այն տպավորությունն է ստեղծվում, որ դրանք գրվել են երրորդ դեմքով և ավելի վստահելի սկզբնաղբյուրից:

9-րդ դարից սկսած՝ դիտարկվում է միջնադարյան հրապարակախոսության՝ դեպի քաղաքական հիմնախնդիրներին միախառնվելու միտումը:

15-րդ դարի անգլիական հրապարակախոսությունը տվեց նաև մեկ այլ վառ ներկայացուցչի՝ Ջոն Ֆորտեսքյուլին, ում քաղաքական պամֆլետները հայտնվեցին թագավորական գահի համար մղվող գերդաստանային պայքարի կիզակետում: Ինչպես և նրա ժամանակի այլ բրիտանացի գրողներ, նա նույնպես գրում էր լատիներեն և անգլերեն: Նրա պամֆլետներից շատերը կառուցված են բացարձակ թագավորական իշխանության ընդդիմության գաղափարով, ընդ որում՝ նախապատվությունը տրվում է անգլիական սահմանափակ միապետության տարբերակին՝ համեմատած Ֆրանսիայում գործող բացարձակ կառավարման ձևին:

Վերածննդի դարաշրջանում աստիճանաբար փոխվեց գրողի սոցիալ-հասարակական դիրքորոշումը, տեղի ունեցավ տեղեկատվական գործընթացների արագ զարգացում: Ի լրումն այն ժամանակներում քաղաքական և մտավորականության շրջանում շրջանառվող պամֆլետների՝ նամակի և նամակագրության տարբեր նմուշներին կողքին հայտնվեց մի քաղաքական ժանր, որը կոչվում էր «ռեյացիա»՝ հաղորդագրություն, այսինքն՝ պատերազմական գործողությունների կամ դիվանագիտական հարաբերությունների մասին տեղեկատվության տրամադրում, որը հիմնականում վավերագրական բնույթ ուներ: Այս ժանրի զարգացումն իր զագաթնակետին հասավ 15-16-րդ դդ. սահմանագծին՝ Իտալիայում:

Վերածննդի դարաշրջանի հրապարակախոսության մեջ առանձնանում էր երգիծանքը, որի վառ օրինակը գերմանական գրական ավանդույթներում Սեբաստիան Բրանտի և Թովմաս Մուրների կողմից ներկայացված «հիմար գրականությունն» էր: Ազգային ավանդույթի համաձայն՝ երգիծական ծաղրի էին ենթարկվում հասարակական, քաղաքական, սոցիալական և մասնավոր կյանքի տարբեր ոլորտները: Այս գրականությունը մեծագույն մարմնավորում ստացավ Էրազմ Ռոտերդամցու ստեղծագործություններում: «Գովք հիմարության» (1509 թ.), օրինակ, նիդեռլանդցի մեծ հումանիստը Մորիի (հիմարության) անունից ընդհանուր քննադատության է ենթարկում իր ժամանակների հասարակության գրեթե բոլոր ոլորտները:

Վերածննդի դարաշրջանի կողմից առաջադրված նոր գաղափարների համալիրը արտացոլված էր հրապարակախոսական աշխատությունների հզոր հոսքում: 16-րդ դարի առաջին քառորդում Եվրոպայում առաջատար հրապարակախոս էր Պիետրո Արետինոն, ում անվանում էին «թագավորների պատուհաս»: Պապական իշխանությունների հալածանքներից Վենետիկում ապաստանած Արետինոն իր բազմաթիվ նամակներում, հաղորդագրություններում, ծաղրերգություններում ամբողջ Իտալիան «պաշարման մեջ էր պահում»: Օտարերկրյա իշխանները նրան թանկարժեք նվերներ էին ուղարկում՝ վախենալով նրա սուր քննադատությունից: Արետինոյի բոլոր հաշվարկները հիմնված էին բացարձակ և անսահմանափակ հրապարակայնության վրա: Ժամանակ առ ժամանակ նա հավաքում էր մինչև այդ շրջանառվող նամակներն ու հողվածները և ժողովածուների տեսքով տպագրում դրանք:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Որո՞նք են համարվում Միջնադարի հաղորդակցական գործընթացների առանձնահատկությունները:
2. Ինչպե՞ս են դրանք ազդել տեղեկատվական գործընթացների բնույթի վրա:
3. Նշել միջին դարերում տեղեկատվության տարածման կարևորագույն ձևերը և բնութագրել դրանք:
4. Նշել Վերածննդի դարաշրջանի ակնառու հրապարակախոսների լրագրողական գործունեության մասին:

ԹԵՄԱ 3
ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆՆ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ
(2 ժամ դասախոսություն)

1. Գիրքը որպես զանգվածային լրատվության միջոց:
2. Գրատպության ստեղծման տեխնոլոգիական հիմքը և առաջին հրատարակիչները:
3. Տպագիր թերթերը և դրանց զանգվածայնությունը:
4. Առաջին պարբերական հրատարակությունները:

Ժուռնալիստիկան ունի զարգացման սոցիալ-տնտեսական և տեխնիկական գործոններ: Վերջինիս շարքին է դասվում թղթի զանգվածային ստեղծման և գրատպության գյուտը: Ինքնին տպագրական հաստոցի գյուտը լրագրության առաջացման կարևոր գործոն է: Այն հսկայական ազդեցություն է ունեցել մարդկային գործունեության բոլոր ոլորտների վրա, հատկապես ժուռնալիստիկայի, քանի որ առանց տպագրական հաստոցի սկզբունքորեն անհնար էր զանգվածայնության ու օպերատիվության ապահովումը, իսկ առանց այս որակների՝ ժուռնալիստիկան՝ որպես հասարակական գործունեության առանձնահատուկ տեսակ, գոյություն չունի: Մի քանի հազարամյակ մարդկությունը փորձում էր հայտնագործել տպագրական հաստոցը: Տպագրման գաղափարը դրված էր ապրանքամիջի կամ խարանի (որոնցով անասնապահները պիտակավորում էին իրենց ձիերին և կովերին), ինչպես նաև հնագույն քաղաքակրթությունների առաջնորդների անհատական կնիքների հիմքում: Մեկ խարանով կամ մեկ կնիքով կարելի էր պիտակավորել հազարավոր անասունների և մեծաթիվ ապրանքներ: Հնագետները մինչև այսօր չեն կարողանում վերծանել Փեստոսի սկավառակի գրությունը, որը հայտնաբերվել է 1908 թվականին Կրետե կղզում:

1450 թվականին Գութենբերգը սկսում է տպագրել առաջին լատիներեն «Աստվածաշունչը», ինչը շատ մեծ ծախսեր էր պահանջում (այդ նպատակով Յոհան Ֆուստ անունով մի մեծահարուստից նա պարտքով վերցնում է 800 գուլդեն, որն այդ ժամանակներում շատ մեծ գումար էր, քանի որ 80-100 գուլդենով կարելի էր քաղաքում մեծ և շքեղ տուն ձեռք բերել): Երեք տպագրական հաստոցների վրա քրտնաջան աշխատում էին վեց վարպետներ, ընդ որում օրական մեկ աշխատողը մեկ էջից ավելի չէր կարող տպագրել: Արդյունքում 1450-1455 թթ.

«Աստվածաշնչի» երկու հատորյակը հայտնվեց թղթի վրա՝ 150 հազար տպաքանակով՝ բաղկացած 1282 էջից (մեկ էջում՝ 42 տող): Սակայն ամբողջ տպաքանակը 2020 գուլդեն պարտքի դիմաց բռնագրավվեց դատարանի կողմից: Այսօր պահպանվել է 47 օրինակ և համարվում է աշխարհի ամենաթանկարժեք գիրքը: 1458-1460 թթ. Գուլթենբերգը հրատարակեց 36 տողանոց «Աստվածաշունչը», որոնցից ցայտ պահպանվել է 13 օրինակ:

Անգլերեն առաջին գիրքը («Տրոյայի մասին պատմվածքների ժողովածուն») տպագրվել է 1474 թվականին Բրյուզ քաղաքում: Այն ֆրանսերենից թարգմանել և հրատարակել է անգլիացի առաջին հրատարակիչ Ուիլյամ Բեքստոնը: 1477 թվականին վերադառնալով Անգլիա՝ նա հիմնեց առաջին անգլիական տպարանը: Անգլիայում տպագրված առաջին գիրքը եղել է «Փիլիսոփաների ասացվածքները»: 15-րդ դարավերջին Ֆրանսիայում հաշվառված էր 50 տպագրատուն: Գրատպութունը շատ արագ տարածում գտավ Եվրոպայում: Շուրջ 40 տարվա ընթացքում մայրցամաքի 260 քաղաքներում բացվեցին ավելի քան 1100 տպարաններ: Լույս տեսան 40.000 հրատարակություններ՝ 10-12.000.000 օրինակ ընդհանուր տպաքանակով: 1500 թ. դեկտեմբերի 31-ից Եվրոպայում հրատարակված առաջին գրքերը կոչվում էին սկզբնաղբյուրներ:

Հարկ է նշել, որ Եվրոպայում հրատարակչական գործի տարածումը համընկավ բարեփոխումների սկզբնավորման հետ: Ավանդաբար ռեֆորմների սկիզբը կապվում է 1517 թվականի հոկտեմբերի 31-ի հետ: Այդ օրը աստվածաբանության ըմբոստ դոկտոր Մարթին Լյութերը Գվիթթենբերգյան կաթոլիկ եկեղեցու դեմ ներկայացրեց 95 թեզ: Այս խորհրդանշական գործողությամբ սկսվեց բարեփոխումների ժամանակաշրջանը, որը հանգեցրեց կրոնական պատերազմների և Եվրոպայում կաթոլիկ ու բողոքական պետությունների բաժանման: Ռեֆորմի գործիչները տպագիր մամուլի միջոցով առաջինը կիրառեցին քարոզչության իրականացումը: Լյութերը և իր համախոհները բազմացնում էին բազմաքանակ թուղթեր, որտեղ պարզ ձևով բացատրում էին ընթացիկ քաղաքական իրավիճակի հիմնախնդիրները և առանձնահատկությունները: Այսկերպ տեղեկատվական թերթիկները, թռչող թռուցիկները, հայտարարությունները, պամֆլետները, երկխոսությունները, ծաղրերգությունն ու երգիծանքը դարձան ռեֆորմի դարաշրջանի հիմնական գաղափարական գործիքները: Դա հզոր զենք էր կրոնական և քաղաքական պայքարում, ինչը հնարավոր դարձավ միայն գրատպության հաջող ընթացքից հետո: Այն արդյունավետ ուժ էր և

առանց բացառության օգտագործվում էր բոլոր քաղաքական և կրոնական ճամբարներում: Թերթերի տպագրության համար հաստոցները սկսեցին օգտագործել ավելի ուշ, քանի որ Եվրոպայի կյանքում անհրաժեշտ էր մի շարք փոփոխություններ ու բարեփոխումներ կատարել: Այդ ժամանակ Եվրոպացիներն արդեն սովորել էին էժան թուղթ պատրաստել, բայց կապի համակարգը դեռ հնացած էր:

Թղթի գյուղը կատարվել է Չինաստանում 2-րդ դարում, այնուհետև պատրաստվում էր Կորեայում, 6-7-րդ դարերում հայտնվեց ճապոնիայում, Չնդկաստանում, Պարսկաստանում և Միջին Ասիայի երկրներում: Սկզբնական շրջանում թուղթը պատրաստում էին բամբակից, իսկ հետո՝ լաթերից: 10-րդ դարում թղթի արտադրությունը յուրացվել է Եգիպտոսում և Չյուսիսային Աֆրիկայում: Արտադրվում էին փաթեթավորման, գրելու համար և փոստատար աղավնիներով ուղարկվող գրությունների թղթեր: Կահիրեում կար թղթագործների մի մեծ թաղամաս: Արաբների կողմից Իսպանիայի զավթումից հետո 1150 թվականին թուղթը ներթափանցեց Եվրոպա, որտեղ առաջին անգամ սկսեցին աշխատել թղթային աղացները, որոնք բամբակից բարձրակարգ թուղթ էին արտադրում:

Ի սկզբանե ժուռնալիստիկան ուներ հիմնականում կոմերցիոն բնույթ: Նրա առաջին դրսևորումները կապված են առևտրական ընկերությունների, առևտրական ցանցերի և որոշ դեպքերում՝ վանքերի հետ: Տպագրական հաստոցներով տպագրված թերթերին նախորդել են բազմաթիվ ձեռագիր նախատիպեր, որոնք բավականին նման էին նամակներին և հաշվետվություններին: Դրանց մասին մենք հիշատակում ենք լրագրության պատմության մեջ, քանի որ գործնականորեն դրանք շատ նման են թերթերին: Այս ձեռագիր թերթիկները հատուկ նախատեսված են եղել որոշակի վճարի դիմաց տեղեկատվության փոխանցման համար: Դրանք ունեին անկայուն հաճախականություն, և այն առաջին մասնագետների գործունեության արդյունքն էին, ովքեր իրենց օրվա հացը վաստակում էին վաճառականների և կայսերական տների բակերում:

Ուշ միջնադարի և Վերածննդի դարաշրջանի Եվրոպան իր աշխույժ առևտրային կյանքով, պատերազմներով, տարածքային մասնատվածությամբ պահանջում էր առևտրային և քաղաքական տեղեկություններ: Առևտրի հաջողությունը հաճախ կախված էր ոչ միայն շուկայական պայմաններից, այլ նաև քաղաքական ինտրիգներից և քաղաքացիական պատերազմներից: Մարդկության պատմության մեջ դժվար է գտնել նման այլ ժամանակաշրջան, երբ առևտրային գործունեությունը այնքան սերտորեն միահյուսված լինի քաղաքական նախաձեռնու-

թյուններին: Ինքնին կյանքն էր նպաստել միջնադարյան քաղաքներում այնպիսի անհատականությունների ի հայտ գալուն, ովքեր զբաղվում էին տեղեկատվության հավաքմամբ՝ ձեռք բերելով այն մասնավոր անձանցից, նավերով ժամանողներից ու նավահանգիստներից: Այս տեղեկությունները արձանագրում էին թղթի վրա, իսկ ձեռագիր տարբերակը բազմացվում և վաճառվում էր տոնավաճառներում, ինչպես նաև սուրհանդակների միջոցով ուղարկվում էր Եվրոպայի թագավորներին, պալատականներին, սակայն ավելի շատ վաճառականներին: Ինչպես հայտնի է, Վենետիկը համարվում էր այն ժամանակների Եվրոպայի առևտրային կենտրոններից մեկը, ինչն էլ այն դարձրեց մի վայրը, որտեղ «հոսում» էր ամբողջ աշխարհի տեղեկատվությունը՝ տեղեկություններ Արևելքից, Հռոմի պապական պալատից, որն առանցքային դեր էր խաղում Եվրոպայի կյանքում, և կայսերական Վիեննայից: Ամենահարուստ տեղեկատվական նյութերը պահանջում էին համակարգվածություն, իսկ համակարգված վիճակում դրանք արդեն համարվում էին ապրանք: Նախաձեռնող վենետիկցիները արագ կերպով դրանք դրեցին շրջանառության մեջ: Քաղաքի կենտրոնում հիմնադրվեց մի բյուրո, որը զբաղվում էր բոլոր նորությունների հավաքագրմամբ, որոնք նավերի և առևտրային քարավանների միջոցով «ժամանում» էին Վենետիկ: Այնուհետև ինֆորմացիան տպագրվում էր հատուկ թերթի վրա, և այս ձեռագիր նորությունները վաճառվում էին «զազետա» կոչվող մետաղադրամով: Արդյունքում արժույթի անունը տեղափոխվեց նորությունների թերթիկների վրա և առաջացավ ժուռնալիստիկայի առաջին տերմիններից մեկը՝ զազետան:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Բնութագրել ՁԼՄ-ների ստեղծման սոցիալ-տնտեսական և տեխնիկական հիմքերը:
2. Ինչո՞ւն էր կայանում Գութենբերգի գյուտը:
3. Ներկայացնել գրատպության զարգացման պատմական ընթացքը:
4. Ինչպե՞ս է գրատպությունը ազդել հասարակության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա:
5. Առաջին հրատարակությունները և դրանց ազդեցությունը տեղեկատվական գործընթացների վրա:
6. Բնութագրել ժուռնալիստիկայի ծագման պատմությունը:

ԹԵՄԱ 4
15-16-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՁԵՌԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱՎԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(2 ժամ դասախոսություն)

1. Ձեռագիր նորությունների ստեղծման պատմությունը:
2. Վերածննդի դարաշրջանի Գերմանիայի տեղեկատվական թերթիկները:
3. Ֆուգերների գրասենյակի գործունեությունը:
4. 16-17-րդ դարերի ձեռագիր հրատարակությունները:

Չնայած 15-րդ դարում տպագրական հաստոցը հայտնագործված էր, այնուամենայնիվ լրատվությունը հիմնականում ձեռագիր էր: Բուրժուական ժողովրդական, ինչպես գիտենք, ի սկզբանե ուներ ընդգծված առևտրային բնույթ և սերտորեն կապված էր բանկային և արտադրական կապիտալի հետ:

15-16-րդ դարերում տեղեկատվության տարածումը համարվում էր շատ շահութաբեր բիզնես և շուտով սիրողական զբաղմունքից վերածվեց մասնագիտության. ստեղծվեցին նորություններ գրողների մասնագիտացված «արտադրամասեր» (Հռոմում՝ *Novellanti*, Վենետիկում՝ *Scrittori d'avviso*): Նորությունների առևտուրը մեծ տարածում գտավ ոչ միայն Վենետիկում, որտեղ հայտնվել են Եվրոպայի առաջին ձեռագիր թերթիկները՝ ավվիզիները¹, այլ նաև Գերմանիայում: Լայպցիգը, Նյուրնբերգը, Ստրասբուրգը, Աուքսբուրգը, Ֆրանկֆուրտը ոչ միայն Գերմանիայի խոշորագույն առևտրային և համալսարանական կենտրոններ էին, այլև տեղեկատվական: Լյուբեքը Նյուրնբերգը կոչել է «Գերմանիայի աչքն ու ականջը»:

Ձեռագիր նորությունների տարածման գործում մեծ համբավ ուներ Ֆուգգերների² գրասենյակը: Վենետիկյան ավվիզիների օրինակով ստեղծված Ֆուգգերների առևտրի բանկային տան թերթը՝ «*Fuggerzeitungen*»-ը (Եվրոպայում շրջանառվել է 1568 և 1605 թթ.) Լայպցիգում ուներ լայնածավալ առևտրային կապեր Եվրոպայի գրեթե

1. Իտալերեն *avviso* բառերից, որը թարգմանաբար նշանակում է հաղորդագրություն, ծանուցում, լրատու: Ամենավաղ *Avvisi*-ն թվագրված է 1566 թ.:

2. Ֆուգգերները Գերմանիայի ամենահին բանկային տներից մեկի հիմնադիրներն են: Այս ընտանիքը իր բիզնես-կայսրությունը սկսել է կառուցել XIV դարում: Այսօր Ֆուգգերների հետնորդները ապրում են Գերմանիայում և ղեկավարում *Furst Fugger Privatbank*-ը:

բոլոր երկրների արքունիքների, իշխանների, առևտրային ընկերությունների և նույնիսկ հռոմեական կուրիայի³ հետ: Դրանով է բացատրվում ֆուզերների իրազեկվածության բարձր մակարդակը: Ընկերության սեփականատերերը և աշխատակիցները տեղեկացված էին Եվրոպայի առևտրային և քաղաքական կյանքի բոլոր իրադարձություններից:

Ֆուզերների համար տեղեկատվությունը դարձավ այնպիսի ապրանք, ինչպես և մնացած վաճառվող ապրանքներն էին: Դպիրների հատուկ անձնակազմը «արտադրում էր» Լայպցիգ «ժամանած» բոլոր նորությունները և իր արտադրանքը ուղարկում այն բաժանորդներին, ովքեր տարեկան վճարում էին այս ապրանքի համար: Ֆուզերների գրասենյակը համարվում է ինֆորմացիոն գործակալությունների նախատիպը: Սա նշանակում է, որ 15-րդ դարում դրվել են տեղեկատվության կարևորագույն տարածողի հիմքերը և մշակվել գործունեության սկզբունքները:

Վերածննդի դարաշրջանում Գերմանիայում մեծ տարածում ունեին տեղեկատվական թերթիկները, որոնք Լյուբեքի կողմից անվանվել են «թռչող թերթիկներ կամ թռուցիկներ»: Դրանցից ամենահետաքրքիրները տպարանների սեփականատերերը արտատպում էին տպագրական հաստոցներով և վաճառում տոնավաճառներում: Թռչող թռուցիկներում հիմնականում գրվում էր կրոնական թշնամանքի, քաղաքական իրադարձությունների, համաճարակների, տարաբնույթ հրաշքների, աղետների և այլնի մասին: Ավելի շատ գնահատվում էր տեղեկատվությունը ինչպես որ կա, այլ ոչ թե իրադարձությունների վերլուծությունները: Ժուռնալիստիկայի զարգացման այդ փուլում սենսացիայի տարրը համարվում էր կոմերցիոն հաջողության կարևորագույն պայման: Հեղինակի լեզուն և ոճը, ինչպես նաև իր անհատականությունը՝ որպես ժուռնալիստական ստեղծագործության էական տարրեր, դեռևս գոյություն չունեին: Դրանք շատ պարզունակ էին, ուստի թռչող թռուցիկների լեզուն շատ աղքատիկ էր, և սա բնորոշ էր շահույթ հետապնդող նորություններին: Ձեռագիր լրատվությունը տարածվում էր հանձնակատարների միջոցով, իսկ հարուստ վաճառականների, ազնվականների, համալսարանականների և վանքերի համար նախատեսված հատուկ նամակները՝ իրազեկիչների միջոցով, որոնց վարձակալում էին մասնավոր անհատները կամ կազմակերպությունները: Իրազեկիչներին կարելի է համեմատել ներկայիս սեփական թղթակիցների հետ: Նրանց

3. Հռոմեական մի շարք պատրիկ ցեղերի տոհմերի միություն:

հաճախ հաջողվում էր թղթակցական կետեր հիմնել, որոնք հավաքում, մշակում և հանձնակատարի միջոցով տիրոջն էին հասցնում ինֆորմացիան. հանձնակատարի ինստիտուտը հաղորդակցության կարևոր միջոցի՝ կապի նախնին էր:

Թերթի դեմքը «ձևավորվել է» բավական երկար ժամանակ: «Թռչող թռուցիկների» մանկական դիմագծերը գրեթե մեկ դար կերպարանափոխվեցին՝ վերածվելով առաջին թերթերի պատանեկան կառուցվածքի: Այստեղ հիմնական արժեքները ոչ թե վաճառականներին ու հանձնակատարներին էր պատկանում, այլ մտավորականությանը: Այդ մարդկանցից էր ավստրիացի Միքայել ֆոն Այնցհինգը, ով տպագրական հաստոցն ու խոսքը կիրառեց լուսավորչական նպատակներով: Այնցհինգը որոշեց համակարգել հայտնի Քյոլնի վեճի հանկարծակյակ փոփոխությունների ողջ կցկտուր տեղեկատվությունը, որն ընթերցողներին հասնում էր նորությունների ձեռագիր թերթիկների միջոցով: Նա շարադրեց գործի ողջ էությունը, նրա զարգացման պատմությունը մի քանի հոդվածներում և հավաքեց «Relatio historica» խորագրով գրքույկի մեջ (Քյոլնի համագումարի պատահարների մասին): Գրքույկը տպագրվեց Քյոլնի տպարանում և վաճառվեց Ֆրանկֆուրտի տոնավաճառներից մեկում: Թեմայի արդիականության շարադրման պարզության ու մատչելիության շնորհիվ այն մեծ հաջողություն ունեցավ: Այդ հաջողությունը խրախուսեց Այնցհինգին և նա շարունակեց իր լրագրական գործունեությունը: Սկսեց գրել ոչ միայն Քյոլնի համագումարի, այլ նաև քաղաքական իրադարձությունների մասին: Այսպես՝ 1588 թ. նրա գրքույկն իրենից ներկայացնում էր ընթացիկ քաղաքական իրադարձությունների տեսություն: Այնցհինգի, «Relatio»-ները լույս էին տեսնում տոնավաճառների նախօրեին և ստացան իրենց 2-րդ անվանումը՝ «Տոնավաճառային բանբեր»: Ռեյացիաների հստակ հաճախականությունը և հասարակական-քաղաքական բովանդակությունը նրան սերտորեն մոտեցրել են այսօրվա թերթին: Այնցհինգը շատ հետևորդներ ուներ: Տոնավաճառային հաշվետվությունները բառաջիորդեն շատ մեծ տարածում գտան Գերմանիայում:

Բացի ձեռագիր թերթիկներից՝ 16-17-րդ դարերում տեղեկատվական հոսքում լայն տարածում ստացան նորությունների թերթիկները, ռեյացիաները, «նորությունների բալլադները», ոչ մեծ ֆորմատի տպագիր գրքույկները, որոնք օպերատիվ կերպով արձագանքում էին ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում կատարվող տարաբնույթ իրադարձություններին և շատ առումներով նման էին առաջին թերթերին: Չնայած այս ընդհանրություններին՝ այնուամենայնիվ երեք հիմ-

նական կետեր այս գրքույկները տարբերակում են առաջին թերթերից.
- նմանատիպ տպագիր արտադրանքը սովորաբար նվիրված էր միայն մեկ իրադարձության,
- այս հրատարակությունները պարբերականություն չունեին,
- մեծ շեշտադրում կար նկարագրական շարքի վրա:
Առաջին թերթերի երևան գալով «Նորությունների գրքերը» չանհետացան, այլ շարունակեցին գոյություն ունենալ 17-րդ դարի ընթացքում:

Չարցեր ինքնաստուգման համար

1. Ինչպե՞ս է գրատպությունն ազդել հասարակության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա:
2. Առաջին հրատարակությունները և դրանց ազդեցությունը տեղեկատվական գործընթացների վրա:
3. Բնութագրել ժուռնալիստիկայի ծագման պատմությունը:

ԹԵՄԱ 5 ԱՌԱՋԻՆ ԹԵՐԹԵՐԸ (4 ժամ դասախոսություն)

1. Եվրոպական պարբերական մամուլի ծնունդը:
2. 17-րդ դարի գերմանական թերթերը:
3. 17-րդ դարի անգլիական թերթերը:
4. Ֆրանսիական ժուռնալիստիկայի ծագումը:

1609 թվականը համարվում է եվրոպական պարբերական մամուլի ծննդյան տարեթիվ: Պատմության միջոցով մեզ հասած առաջին թերթերը լույս են տեսել 1609թ. Ստրասբուրգում և Աուքսբուրգում: Իսկ պահպանված թերթային համարների բովանդակությունից ելնելով կարելի է ենթադրել, որ լույս են տեսել ավելի վաղ ժամանակներից: Ստրասբուրգյան թերթի համարներից մեկում նշվում է, որ այն լույս կտեսնի «նախորդ տարիների օրինակներին հետևելով»: Ստրասբուրգում լույս տեսնող թերթը կոչվում էր «Relatio» («Լրատու») և պատմում էր 1609թ. ընթացիկ տարվա Գերմանիայում, Յունգարիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Լեհաստանում, Մոլդովայում տեղի ունեցած ուշագրավ նորությունների մասին: Բոլոր նորությունները տպագրված էին այն ձևով, ինչ տեսքով որ առաքվել էին: Ստրասբուրգյան շաբաթաթերթը

հրատարակում էր հրատարակիչ Յոհան Կարոլիուսը: Նույն տարեթվին Աուքսբուրգում Լուկա Շուլտեն հրատարակում էր մեկ այլ շաբաթաթերթ՝ ևս «Avisa Relation oder Zeitung»-ը:

Հաջորդ մի քանի տարիների ընթացքում նմանատիպ շաբաթաթերթերը տարածվեցին ամբողջ Եվրոպայով մեկ. 1610թ. «Ordinari Wochenzeitung» տպագիր շաբաթաթերթը սկսել է հրատարակվել Բազելում, 1615թ.՝ Ֆրանկֆուրտում և Վիեննայում, 1616թ.՝ Համբուրգում, 1617թ.՝ Բեռլինում, 1618թ.՝ Ամստերդամում, 1620թ.՝ Անտվերպենում, Մագդեբուրգում, Նյուրնբերգում, Քյոլնում: Թերթերի համարները բացառապես կազմված էին Եվրոպայի տարբեր ծայրերի մասին պատմող թղթակցություններից, որոնք տեղադրված էին կամայական սյունակներում՝ առանց որևէ կապի: Թղթակցությունները իրենցից ներկայացնում էին առանց վերլուծությունների և մեկնաբանությունների պարզ շարադրվածքներ: Հեղինակային դիրքորոշումը դրսևորվում էր խիստ հազվադեպ:

17-րդ դարի Գերմանիայի թերթերի չոր լեզուն, նրանց ապաքաղաքականությունը բացատրվում էին մի կողմից խիստ գրաքննությամբ, մյուս կողմից՝ պամֆլետների միջոցով քաղաքական բանավեճեր իրականացնելու ավանդույթով: Առաջին գերմանական թերթերի անտարբերությունը նրանց ֆունկցիոնալ սահմանափակումների հետևանքն է, ինչը հասկանալի երևույթ էր կայացման ժամանակաշրջանի համար: Թերթերը շարունակում էին մնալ առանց իրենց սեփական դեմքի, նույնիսկ արտաքին տեսքը գիրք էր հիշեցնում: Թերթի ֆորմատը հավասար էր մեկ քառորդ էջի, բայց ի տարբերություն գրքերի՝ տպագրության որակն ավելի ցածր էր: Մեծաթիվ բացթողումներն ու սխալները կարելի է բացատրել շտապողականությամբ, որը պահանջվում էր հրատարակիչներից: Որպես կանոն՝ թուղթը ցածրորակ էր: Առաջին թերթերը լույս էին տեսնում շաբաթը մեկ անգամ: Ավելի ուշ ի հայտ եկան օրաթերթերը: Չնայած վերոնշյալին՝ թերթերը բավական մեծ ժողովրդականություն ձեռք բերեցին և մեծ տարածում գտան:

1616թ. Յոհան Մեյերը Համբուրգում տպագրում է «Շաբաթական լրատուն», իսկ 1630թ. նա արդեն մրցակից ուներ՝ փոստատեր Կլեյնհաուզը, համբուրգյան «Փոստային նորությունների» սեփականատերը: 1640 թվականին դրանց ավելացավ նաև «Նոր համբուրգյան շաբաթական թերթը»:

1673թ. հիմնադրվեց համբուրգյան ամենահաջող ու ամենահայտնի թերթը՝ «Կուրիրը», որի հիմնադիր Թովմաս ֆոն Վիրիգենը կարողացավ կիրառել ոչ միայն գերմանական, այլ նաև ֆրանսիական և անգլի-

ական ժուռնալիստիկայի «մտավորականության թերթիկների» փորձը: Թերթային գործն արագորեն զարգացավ Լայպցիգում: Դասակարգին այն շվեդների ձեռքում էր, բայց 1650 թվականից հետո շվեդական թերթերն անհետացան, և անկախ մամուլը զարգանավ: 1659 թվականին հրատարակիչ և գրավաճառ Տիմոթեոս Ռիցցին, սաքսոնական կառավարության կողմից թերթի հրապարակման համար թույլտվություն ստանալով, 1660 թվականի հունվարի 1-ից լույս ընծայեց գերմանական առաջին քաղաքականացված թերթը, որը համարվում է նաև աշխարհում առաջին օրաթերթը: Սկզբնական շրջանում այն կոչվում էր «Յենց նոր ստացված լուրեր ռազմական միջադեպերի և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին»: Ավելի ուշ անվանումը փոխվեց «Leipziger Zeitung»-ի: Աշխարհի այս ամենահին թերթերից մեկը լույս տեսավ մինչև 1921 թվականը: Առաջացավ միանգամայն նոր մասնագիտություն՝ թերթի լրագրողի կամ պարզապես՝ լրագրողի մասնագիտությունը, որի կարգախոսը օպերատիվությունն էր, հրատապությունը: Թերթերն արդեն հրատարակվում էին տպարաններում, իսկ ավելի ուշ ստեղծվեցին թերթային ընկերությունները:

17-րդ դարի վերջին թերթը գրավել էր ողջ Գերմանիան: Դրա կարևորության և անհրաժեշտության մասին ոչ ոք չէր կասկածում, ավելին՝ կրթված մարդիկ թերթերին առանձնակի կարևորություն էին վերագրում: 1697թ. Յամբուրգում լույս տեսավ «Թերթային ընթերցանության օգտակարության մասին» գիրքը, որի հեղինակը գրում է «Ով ցանկանում է իմաստալից կյանք անցկացնել, լինել հասարակության արժանի անդամ և մասնակցություն ունենալ նրա պետության առևտրային և քաղաքային գործունեությանը, պարտավոր է այն կիրառել գործնականում»:

Սակայն ժուռնալիստիկայի զարգացումը Գերմանիայում երկար ժամանակ դադարեցվել էր սոցիալ-քաղաքական և տնտեսական բնության խնդիրների պատճառով: Գերմանական թերթերը երկար ժամանակ մնացին տեղեկատվական-առևտրային (կոմերցիոն): Լրագրության գաղափարական-քարոզչական գործառույթը Գերմանիայում իրականացվեց Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Ժամանմամբ»: Իսկ անգլիական և ֆրանսիական մամուլը, որն ի հայտ է եկել ավելի ուշ, 18-րդ դարում առաջ անցավ նրանից և՛ զարգացման տեմպերով, և՛ բովանդակության մակարդակով, և՛ այս մասնագիտության ներկայացուցիչների վերապատրաստման որակով:

Անգլիայում ժուռնալիստիկան սկսվեց այնպես, ինչպես Գերմանիայում՝ ձեռագիր թերթիկներից: Սակայն դրանք կղզի էին բերվել ավելի

ուշ և իրենց ծագմամբ գերմանական կամ հոլանդական էին, այսինքն՝ անգլերեն թարգմանվել էին Ալդերի, Ֆուգերների կամ քիչ հայտնի տեղեկատվություն հավաքողների և տարածողների կողմից կազմված եվրոպական նորությունների թերթիկներից:

17-րդ դարասկզբին Անգլիայում հայտնվում են պարբերական բնույթի տպագիր հրատարակություններ: Նրանցից «Weekly News from...»-ը հրատարակվում էր Լոնդոնում Ն. Բոռնի և Թ. Արչի կողմից: Ընդհանուր առմամբ 17-րդ դարի 20-30-ական թվականները երկրում նշանավորվեցին տպագրական գործի ակտիվ զարգացմամբ, այդ թվում նաև մեծաթիվ տարաբնույթ «News»-երի հայտնվելով, որոնք լույս էին տեսնում անկանոն պարբերությամբ:

Պետությունը շուտով գրատպությունը և ժուռնալիստիկան խիստ հսկողության տակ է վերցնում՝ այս բիզնեսը վերածելով մենաշնորհի: Գրքերի, բրոշյուրների, պամֆլետների և նորությունների արտադրության համար իրավունքի արտոնագիր կարելի էր ստանալ միապետի ձեռքից: Հայտնի են տվյալ ժամանակահատվածի մի քանի հրատարակիչների անուններ, ովքեր ունեին այդ իրավունքը. Նաթանիել Բաթթեր, Բ. Դոուլետզ, Ն. Նեյվերի: Նրանց, ինչպես և 16-րդ դարի գերմանացի տպագրիչների արտադրանքը, իրենց բոլոր տարբերակներով առավելապես գիրք էին հիշեցնում, այդ իսկ պատճառով թերթերի նախնիները պատմության մեջ հաճախ են կոչվում «նորությունների գիրք»: Ժամանակակից տերմինաբանությամբ կարելի է ասել, որ դրանք 6-25 էջանոց, ոչ մեծ ֆորմատի, կազմով ամսագրեր էին:

1620-ական թվականներին Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքական իրավիճակը նպաստեց անկախ պարբերական մամուլի զարգացմանը: Այդ իսկ պատճառով առաջին անգլիական և ֆրանսիական թերթերը հայտնվել են գրաքննչական արգելքներից ազատ Յոլանդիայում: 1620թ. Անստերդամում հրատարակվում էին շաբաթաթերթեր, որոնց տպաքանակը արագ շրջանառվում էր Անգլիայում և Ֆրանսիայում: Այս հրատարակությունները կոմերցիոն հաջողություն ունեցան: Անգլիայում հոլանդական թերթերի տիրապետության ժամկետը երկար չտևեց:

60-ականների կեսերից լույս էր տեսնում «Օքսֆորդյան թերթը» («Oxford Gazette»): Այն լույս էր տեսնում շաբաթը երկու անգամ և արտաքին տեսքով իսկական թերթի էր նման, համեմայն դեպս կազմվում է որպես թերթ (այստեղ առաջին անգամ հայտնվում է սյունակների համակարգը): Այս թերթը տպագրվում էր Օքսֆորդում, իսկ հետո վերատպվում Լոնդոնում՝ հանրային լայն զանգվածների համար: Որոշ ժամանակ անց այն վերանվանվեց «Լոնդոնյան թերթի»: Հետաքրքիր

փաստ է, որ թերթը թարգմանվում էր ֆրանսերեն, այսինքն ուներ միջազգային տարբերակ:

Ինչպես և բոլոր առաջին թերթերը, այն առանձնանում էր տեղեկատվական բնույթով և չոր լեզվով: Բուրժուական հեղափոխության դարաշրջանի Անգլիայում, ինչպես և ռեֆորմի ժամանակների Գերմանիայում, քաղաքական բանավեճի անցկացման միջոցը պամֆլետներն էին, այլ ոչ թե թերթերը: Պամֆլետային հրապարակախոսությունը դարձավ ժուռնալիստիկան ձևավորող կարևոր գործոններից մեկը:

Առաջին «Մերկուրիների» ժամանակներից մինչև առաջին օրաթերթերի ի հայտ գալը Անգլիայում տևել է գրեթե մեկ դար: Այն երկրի սոցիալ-տնտեսական բուռն զարգացման դարաշրջանն էր. զարգացել էին ոչ միայն անգլիական առևտուրը և արդյունաբերությունը, այլ նաև անգլիական մշակույթը և հասարակական միտքը, որը դարձել էր լայն զանգվածների ուժերի և կարողությունների կիրառման տարածք: Այս ակտիվությունն իր արտացոլումը գտավ ժուռնալիստիկայում, որը 100 տարվա ընթացքում զարգացել էր պարզունակ «News» նորությունների թռուցիկներից մինչև տեղեկատվության հավաքման և տարածման մեխանիզմների կատարելագործում: 1702թ. Լոնդոնում լույս տեսավ առաջին շաբաթաթերթը՝ «Daily Courant»-ը, այնուհետև անգլիական ժուռնալիստիկան բուռն զարգացում ապրեց թերթային արտադրության հետքերով, և այսօր նրա առավել բնորոշ հատկանիշներից մեկը համարվում են միլիոնավոր տպաքանակով «զանգվածային» թերթերը:

Ֆրանսիական ժուռնալիստիկան ստեղծման առաջին իսկ քայլերից տարբերվում էր իր բովանդակությամբ ինչպես գերմանական, այնպես էլ անգլիական պարբերականներից: Արդեն առաջին ֆրանսիական թերթիկը ավելի հեռուն էր գնում հասարակ հաղորդագրություններից և ձգտում էր հասարակության մեջ որոշ գաղափարների շուրջ կարեկցանք ու նտահոգություն արթնացնել:

Ֆրանսիական ժուռնալիստիկայի աննկարագրելի ազգային երևույթը կանարդն (canard) էր: Այն կարելի է անվանել ֆրանսիական ժուռնալիստիկայի բանահյուսությունը: Սկզբնական շրջանում դրանք հրապարակումների ինքնուրույն ձևեր չէին: 1488-1529թթ. Ֆրանսիայի պատմաբանները առանձնացնում էին գրեթե 200 պատահական հայտնված հետաքրքրական պատմվածքներ: 1515-1529թթ. դրանք անհաշիվ քանակով հայտնվեցին «Փարիզյան բուրժուայի թերթ»-ում: 1560թ. Պիեռ Բոեստոն դրանք հավաքեց «Անսովոր պատմվածքներ» անվամբ տեղեկագրում: Մեծ քանակով դրանք տպագրվել են նաև 1605թ. «Ֆրանսիական Մերկուրի» թերթում:

Կանարդը՝ որպես հրապարակախոսության ինքնուրույն ձև, 16-17-րդ դարերում լայն տարածում ստացավ: Այն իրենից ներկայացնում էր 80x125 մմ ֆորմատով, 8-16 էջ ծավալով բրոշյուր: Չնայած տպագրվում էին շատ անորակ թղթի վրա և բազմաթիվ սխալներով, այնուամենայնիվ դրանք շատ հայտնի էին, և վաճառում էին արքունական պալատի պատերի տակ՝ բարձրաձայն աղաղակելով անհավանական անվանումներ, որոնք գնորդներին գրավում էին իրենց սենսացիոն լիցելու փաստով:

Չարցեր ինքնաստուգման համար

1. Ներկայացնել գերմանական ժուռնալիստիկայի ստեղծման պատմությունը:
2. Ներկայացնել անգլիական ժուռնալիստիկայի ստեղծման պատմությունը:
3. Ներկայացնել ֆրանսիական ժուռնալիստիկայի ստեղծման պատմությունը:
4. Ի՞նչ է կանարդը:
5. Ներկայացնել Թ. Ռենոդոյի լրագրողական գործունեությունը:

ԹԵՄԱ 6

ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱՌԱՋԻՆ ԱՄՍԱԳՐԵՐԸ: ԱՆՉԱՏԱԿԱՆ ԺՈՒՈՆԱԼԻԶՄ: (2 ժամ դասախոսություն)

1. 16-17-րդ դդ. անգլիացի փիլիսոփաների դիրքորոշումները:
2. Եվրոպական առաջին ամսագրերը:
3. Լուսավորչական լրագրության ներկայացուցիչները:

Լուսավորչության դարաշրջանը շրջադարձային էր եվրոպական քաղաքակրթության համար: Եվրոպան վճռական քայլ էր կատարում դեպի նոր սոցիալ-տնտեսական, քաղաքական և գաղափարական ձևեր: 18-րդ դարի բացարձակ ռեժիմը փոխարինվում է ժողովրդավարականով. ֆեոդալական տնտեսական հարաբերություններն իրենց տեղը զիջում են կապիտալիստականին, գիտության և փիլիսոփայության մեջ հաստատվում է ռացիոնալիզմը, քաղաքական և հոգևոր կյանքում՝ հանդուրժողականության սկզբունքը, «մարդու բնական

իրավունքները» և ժողովրդավարությունը արդարացվում են և ստանում իրավական գրանցման հայեցակարգ: Վերոնշյալ երևույթներն իրենց ճանապարհը հարթել են մեծ դժվարությամբ. 18-րդ դարը դարձել էր անկախության համար մղվող արյունալի պատերազմների և հեղափոխությունների դարաշրջան:

Սոցիալ-տնտեսական և քաղաքական ձեռքբերումները միմյանց շաղկապված էին հոգևոր շարժման հարթությունում, որն ինքնանվանվել էր «Լուսավորություն»: Եվրոպայում առաջադեմ ուժերի կարգախոսն էր՝ «Կրթությունն մտավոր լույսի օգնությամբ»: Ճանապարհորդության, միջազգային գրավաճառության, թարգմանության և նամակագրության շնորհիվ նոր գաղափարները մեծ տարածում են գտել:

Եվրոպական լուսավորչության սկիզբը կապվում է 16-րդ դարի անգլիացի փիլիսոփաների հետ: 1689թ. հաստատված «Իրավունքների օրինագիծը»⁴ մշակակալից իրադարձություն էր ոչ միայն Անգլիայի, այլև ամբողջ Եվրոպայի համար, քանի որ այն նոր մոդել էր անհատի և պետության փոխհարաբերությունների միջև: Լոքքի հայտնած դիրքորոշումը, որ «մենք ծնվում ենք ազատ, ճիշտ այնպես, ինչպես մենք ծնվում ենք և ողջամիտ», շատերի համար պարզապես վավերական հայտնություն էր: Այս առթիվ Վոլտերը գրում է. «Լոքքը մարդու առաջ բացահայտել է մարդկային միտքը, ինչպես շնորհալի մարդաբանը կբացատրեր մարդու մարմնի մեխանիզմը»⁵: Ինչպիսի՞ պայմաններում են ի հայտ եկել եվրոպական առաջին ամսագրերը: Դրանք առաջին հերթին սահմանվում են 17-րդ դարում ինտելեկտուալ միջավայրի ստեղծմամբ, որը պատմության մեջ էր մտել «Գրականագետների հանրապետություն» կամ «Գիտնականների հանրապետություն» անվանումներով: Այս հասկացությունը եվրոպական մտավորականների համար հանդես էր գալիս իբրև նոր ձև, որն ուղղված էր հակասքուլաստիկ

4. *Bill of Rights-Իրավունքների նախագիծ: 1787 թվականին ընդունված ԱՄՆ Սահմանադրության առաջին տասը փոփոխությունները, որոնք իրականացվել են 1789 թվականին: Իրավունքների նախագիծն ուժի մեջ է մտել 1791 թվականի դեկտեմբերի 15-ին: Յոչակել է խոսքի, մամուլի, հավաքների, դավանանքի, եկեղեցու և պետության բաժանման, անձի անձեռնմխելիության և այլնի ազատությունը: Յիմնական իրավաբանական փաստաթուղթը երաշխավորում էր ԱՄՆ քաղաքացիների անհատական քաղաքական իրավունքները և ազատությունները: Սույն նախագծով վերջ էր դրվում արսոյուտիզմի դարաշրջանին և միջնադարյան Եվրոպային բնորոշ թագավորի և կառավարության իշխանությանը:*

5. *Вольтер. Филос. соч. М., 1988. С. 109.*

մեթոդների ճանաչողությանը: Այն գրականագետների յուրատիպ միջազգային «եղբայրություն» էր, որն իր առջև խնդիր էր դրել աստվածաբանական դոգմաների մեջ գտնել «ճշմարիտը»: Ի լրումն անձնական հանդիպումների՝ այս խմբի անդամները կարիք ունեին գիտական մամակագրության, առանց որի դժվար էր պատկերացնել Եվրոպայի այդ ժամանակաշրջանի հոգևոր-մշակութային կյանքը: Նամակագրությունն անտիկ ժամանակներից, միջնադարից կամ Վերածննդից մամակային ժանրի ժառանգության մի տեսակ էր. յուրաքանչյուր ոք, ով ձգտում էր գիտելիք ստանալ, պետք է հիմնվեր ոչ միայն Ուսուցչի և մեկնիչի տված ուսմունքի վրա, այսինքն՝ ոչ միայն պատրաստի գիտելիքի, այլև համարժեք մոտեցմամբ իր և այլ անհատների կուտակած գիտելիքի վրա: Ժամանակի ընթացքում ստեղծվեցին գիտական հանրույթներ, որոնք ընդունակ էին միջոցներ հայթայթել և ներդնել պարբերական հրատարակումների համար:

«Ամսագիր» բառը ծագել է լատիներեն «dernalis» (օրաթերթ) բառից, որը հիշեցնում է Հուլիոս Կեսարի «Ակտա Դյուրնա»-ն: Եվրոպական առաջին ամսագրերի առանձնահատկությունը գերազանցապես գիտական կողմնորոշումն էր, սակայն գիտական մամակագրությունը չէր կարող հաղորդակցման մեջ ներառել մեծ թվով մասնակիցների: Պարբերական հրատարակությունների տեղեկատվական-քարոզչական հնարավորություններն անհամաչափորեն բարձր էին: Եվրոպական առաջին և ամենահին գիտական-գրական ամսագիրը՝ «Գիտնականների ամսագիրը»⁶ (1665-1828թթ.), ստեղծվել է Ֆրանսիայի ֆինանսների նախարար Ժան-Բատիստ Կոլբերի նախաձեռնությամբ, ում հաճախ համեմատում են կարդինալ Ռիշելյեի հետ:

Կոլբերը նախատեսել էր պարբերական հրատարակություն, որը կլուսաբաներ գիտական, գրական-քննադատական այն խնդիրները, որոնք ծառայել էին Եվրոպայի ինտելեկտուալ վերնախավի առջև: Այդ հրատարակությունը լույս է տեսել Փարիզում 1665թ. հունվարի 5-ին՝ կառավարության նախկին խորհրդատու Դենի դե Սալլոյի խմբագրությամբ և հրատարակչությամբ: Ամսագիրը նախ լույս էր տեսնում շաբաթը մեկ, ապա՝ երկու անգամ (12 էջից բաղկացած): Սալլոյի հրատարակությունը միտված էր գիտական հաղորդակցության, տեղեկատվության փոխանակման, գիտական քննարկումների բացի լրացմանը՝ մամակի ձևով ներկայացնելով գիտահետազոտական տեսություններ և նյութեր: Ամսագիրը կենտրոնացած էր գիտական բանավեճի և վեճի

6. Նշվ. *Journal des sçavans*:

«սաղրանքի» վրա: Մեկ տարի անց ամսագրի հրատարակումը անցավ վանահայր, հունարենի պրոֆեսոր ժան Գալլուայի ձեռքը, ով խմբագրի պաշտոնում մնաց մինչև 1674 թ.:

«Գիտնականների ամսագրի» հրատարակությանը օժանդակել են ֆրանսիական մշակույթի այնպիսի հայտնի գործիչներ, ինչպիսիք են Մարեն Լերոյ դե Գոմբերվիլը և ժան Շապլենը:

1665 թ. Յենրի Օլդենբուրգի խմբագրությամբ Անգլիայում ստեղծվեց գիտության հիմնախնդիրներով հետաքրքրված աշխարհում առաջին անգլալեզու գիտական ամսագիրը՝ «Թագավորական հասարակության փիլիսոփայական⁷ աշխատությունը», որը թագավորական հասարակության տպագիր մարմին էր և լույս էր տեսնում ամսական կտրվածքով: Առաջին համարում տեղ գտած 10 հրապարակումներից 3-ը արտատպված էին ֆրանսիական «Գիտնականների ամսագրից»:

1668թ. Յոնում լույս տեսավ առաջին իտալական ամսագիրը՝ «Il Giornale de'Letterati» («Գրականագետների ամսագիրը»), որի խմբագիրը Ֆրանչեսկո Նազզարոն էր: Ամսագրի մոդելը նույն ֆրանսիականն էր, որը հետագայում օրինակ հանդիսացավ իտալական բոլոր գիտական ամսագրերի ստեղծման համար: Հրատարակությունը լուսաբանում էր գրականագիտական, լեզվագիտական, փիլիսոփայական բնույթի ստեղծագործություններ և տպագրվեց մինչև 1679թ.: 1682 թվականին պրոֆեսոր Օտտո Մենկեն Լայպցիգում նախածնեց առաջին լատինալեզու ամսագրի՝ «Acta Eruditorum»-ի («Գիտական նոթեր») հրատարակությունը, որը շատ շուտ համաեվրոպական ճանաչում ստացավ, տպագրվեց մինչև 1731 թվականը:

Եվրոպայի շատ քաղաքներում տարածված գրաքննչական հալածանքը, ստիպված էր հրավիրել լրագրողների ուշադրությունը Նիդեռլանդներում գրքեր հրատարակելու հնարավորության վրա: Ֆրանսիացի ազդեցիկ մտածող, փիլիսոփա քննադատ Պիեռ Բեյլը, ում Գ. Գեթթները նկարագրել է որպես «համարձակ ֆաուստյան բնություն, որը մշտապես թափառում էր մարդկության ամենախորը հարցերի շուրջ», ստիպված է եղել արտագաղթել Յուլանդիա՝ կրոնական համոզմունքների պատճառով: Այնտեղ 1684 թ. նա սկսեց հրատարակել փիլիսոփայական գրական պարբերական թերթ՝ «Գրական հանրապետության նորությունները», որի համարներից մեկում ընթերցում ենք. «Յուլանդիա-

7. «փիլիսոփայություն» բառն այստեղ կիրառվում էր «բնափիլիսոփայություն» բառի իմաստով և բացատրությամբ, ինչպես այն ժամանակներում անվանում էին բնական գիտությունները:

յի Չանրապետությունը աչքի է ընկնում առավելությամբ, որը չունի ոչ մի երկիր. նրանում տպագրիչներին տրամադրում են ազատ գործելու մեծ հնարավորություն, այնքան, որ նրանց դիմում են Եվրոպայի բոլոր ծայրերից մարդիկ, ովքեր հուսահատված են դժվարություններից, որոնց նրանք բախվել են փորձելով ստանալ արտոնություն՝ իրավունք իրենց ստեղծագործությունները տպագրելու համար»: Ապա ավելացվում է. «Մենք ազատ կլինենք անհիմն կողմնակալությունից: Մենք հանդես կգանք առավելապես որպես բանախոս, քան որպես դատավոր և բարեխղճորեն կներկայացնենք հատվածներ գրքերից, որոնք ուղղված կլինեն ինչպես մեր, այնպես էլ մեր կողմնակիցների դեմ»: Բեյլի հրապարակումը մեծ արձագանք գտավ՝ եվրոպական ինտելեկտուալ շրջանակներում՝ հաստատելով խմբագրի վստահությունը: Ֆրանսիայում «Գրական հանրապետության նորությունների» տարածումը արգելված էր: Բեյլի ամսագիրը պարունակում էր փիլիսոփայական, աստվածաբանական, պատմական, գրականագիտական գրքերի գրախոսություններ, ինչպես նաև քաղաքական և կրոնական բնույթի գրվածքներ: Ֆրանսիական հոգևոր ուղղափառներին զայրացնում էին Բեյլի խմբագրությունում հրատարակված անկախ նյութերը: Նույնիսկ Յոլանդիայում, որտեղ այլակարծությանը համբերությամբ էին վերաբերվում, մի շարք հրապարակումներ հանգեցրել են նրան, որ թերթի անկախ խմբագիրը Ռոտերդամի համալսարանում զրկվել է իր պատմության և փիլիսոփայության պրոֆեսորի կոչումից: Չարականների հարձակումը և առողջության վատթարացումը Բեյլին ստիպեցին երեք տարի անց դադարեցնել իր հրապարակումը: Բեյլի աշխատանքը շարունակեց Բոնաժ դե Բովալը՝ ամսագիրը վերանվանելով «Գիտնականների աշխատանքների արձանագրություն», որը նոր տեսքով հրատարակվեց մինչև 1709 թ.:

1688 թ. Բեյլի գաղափարական հակառակորդ և ներգաղթական Ժան Լեկլերկը Ամստերդամում նախաձեռնեց «Չանընդհանուր պատմական գրադարան» ամսագրի հրատարակությունը, որը շարունակվեց հինգ տարի և հայտնի դարձավ նրանով, որ առաջին համարում Լեկլերկը հրապարակել է լայնածավալ հատվածներ մեծանուն անգլիացի փիլիսոփա Ջոնն Լոքքի «Մարդկային ըմբռնման փորձի մասին» աշխատությունից, որը մեծ բանավեճ է առաջացրել Եվրոպայի շատ երկրներում:

Լավ կարգավորված տպագրական գործն ու «գաղափարական լիբերալիզմի» առավելությունների հմուտ օգտագործումը թույլ տվեցին Յոլանդիային զգալի շահույթ ստանալ՝ տպագրական արտադրանք վաճառելով հարևան երկրներին (Անգլիա, Ֆրանսիա), որտեղ այն մեծ

պահանջարկ ուներ: Յետաքրքիր է նշել, որ եթե գերմանական առաջին թերթերի անվանումներում հանդիպում է իտալական «avviso» բառը, ապա հոլանդական առաջին անվանումները պարունակում են «couranto» բառը, որը Յոլանդիայում դարձել է «թերթ» բառի հոմանիշ ու մտել եվրոպական առօրյա:

Ինքնին «couranto» բառը նշանակում էր «ընթացքի մեջ լուրեր, նորություններ» (կապված ֆրանսերեն «Courant» - «վազող») ու բավականին լայն տարածում ուներ, ինչը գրանցված է եվրոպական մի շարք պարբերական հրատարակությունների անվանումներում:

Ֆրանսիայի գրական-քննադատական բովանդակության ամսագրերը սկիզբ են առնում «Mercure Galant» ամսագրից, որն ստեղծվել է 1672 թ.: Թագավորական «արտոնություն» հրատարակելու համար ստացել է դրամատուրգ Ժան Դոմինո դե Վիզը՝ Մոլիերի հայտնի գրական հակառակորդը: Առաջին տարիներին ամսագիրը հրատարակվում էր անկանոն, բայց 1677թ. դե Վիզը այն դարձրել է ամսական հրատարակում: Ընթերցասեր հասարակության կողմից մասնավորապես մեծ հաջողություն ունեցավ լրատվության բաժինը, որը կարելի էր անվանել աշխարհիկ բաժնի վավերագրություններ:

Այսպիսով՝ 17-րդ դարի երկրորդ կեսը լուսավորության սկզբնավորումն էր: Լուսավորչական լրագրության խնդիրն էր՝ հասարակության բարքերը ուղղել կրթության և զվարճանքի միջոցով: Յետևաբար, ուսումնական հրատարակությունների լեզուն պարզ էր և հստակ, որպեսզի հասկանալի լինեին հնարավորինս մեծ թվով ընթերցողներին: Ինչպես գրել է Դանիել Դեֆոն⁸. «Եթե դուք ինձ հարցնեք, թե որ ոճն էմ համարում լավագույնը, ես կպատասխանեմ. այն, որի միջոցով կարող եմ խոսել տարբեր մասնագիտությունների տեր 500 մարդու հետ՝ բացառելով հիմարներին և խենթերին, և լինել հասկանալի բոլորին»:

Դեֆոն հայտնի էր որպես փորձառու պամֆլետիստ և բանավիճող, ում երգիծական հարձակումները բազմիցս հասել են իրենց նպատակին: Նրա «Այլախոհների հետ հաշվեհարդար տեսնելու ամենակարճ միջոցը» (1702թ.) պամֆլետը ուղղված էր անգլիական եկեղեցիների կողմից իրականացվող կրոնական հետապնդումներին, բայց Դեֆոն այնպես է այն գրել, որ մոլորեցրել է նրանց, ում ուղղված էր պամֆլետը: Փոքրիկ ծաղրանկարին ի պատասխան՝ պամֆլետիստի նկատ-

8. Դանիել Դեֆո (անգլ.՝ Daniel Defoe, 1660, Կրիպլզեյթ - ապրիլի 24, 1731, Մուրֆիլդս), անգլիացի նշանավոր արձակագիր՝ հանրահայտ «Ռոբինզոն Կրուզո» վեպի հեղինակը:

մամբ իրականացվեց դատավարություն, հայտնաբերված օրինակների հրապարակային այրում, տուգանք և 3 անգամ անարգանքի սյունի՞ն գամում: Սակայն Դեֆոյին հաջողվել է քաղաքացիական տուգանքը փոխարինել իր սեփական հաղթանակով: Դեֆոն բանտում գրել է «Օրհներգ անարգանքի սյունին» (1703թ.), որը վաճառքի հանվեց հենց դատավարության ժամանակ, և հրապարակում հավաքված ամբոխը ծափահարություններով ու ծաղիկներով ողջունեց Դեֆոյին:

Լուսավորչությունը համընկավ ամսագրային պարբերականների ծաղկմանն ու առաջացմանը, և այս զուգադիպությունն ունի իր օրինաչափությունը: Այն ժամանակ, երբ իշխանության գլխին փիլիսոփաներն ու գրողներն էին, տպագրական խոսքի դերը հասարակության մեջ շատ արագ աճեց: Այդ ժամանակաշրջանը հաճախ անվանում են անհատական ժուռնալիզմ. գրեթե յուրաքանչյուր պարբերական ուներ իր խմբագրի ու հրատարակչի ինքնությունը, որոնք իրականացնում էին իրենց գաղափարական քաղաքականությունը: Գրողներն ու փիլիսոփաները հաճախ են դիմել ամսագրերի ստեղծմանը, որպեսզի կարողանան քարոզել իրենց սեփական տեսակետները: Ամսագրերը, ինչպես հայեցակարգային պարբերական հրատարակությունները, դարձել էին հաղորդակցության հիմնական ուղի՝ ընթերցողների շրջանակներում լուսավորչական մեծ գաղափարների տարածման համար:

17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին «Լուսավորչական դարաշրջանում», Եվրոպայում տեղի ունեցած կարևոր փոփոխությունները կապված էին մշակութային դարաշրջանի լուրջ ձևափոխման մեջ: Թույլ տեքստը աստիճանաբար իր տեղը զիջեց գերազանց տեքստին, որը օգնում էր ճանաչել բնության և հասարակության օրենքները: Համարվում է, որ հենց այդ ժամանակ գիտելիքը ձեռք էր բերում տեղեկատվական ձև, որը, հետևելով վերածննդի ավանդույթներին, սկսում է աշխարհը կարդալ ինչպես գիրքը, բայց ոչ ապրիորի, այլ ծնվում է մի զգացողություն, որով իրականությունը կարող էս «կատարելագործել»:

Այդ ժամանակաշրջանում լրագրողական պրոֆեսիոնալիզմը այնպես արագ է զարգանում, ինչպես առաջացել է մամուլը: Իսկ նման երևույթը, ինչպիսին անհատական ժուռնալիզմն էր, մարդուց պահանջում էր մասնագիտական ունիվերսալիզմ: Անդրադառնալով Դանիել Դեֆոյի ստեղծագործական աշխատանքին. նրա ամսագիրը «Ռեվյուն» (1660-1731թթ.), եղել է բացառիկ աշխատություն և տաղանդ: Դեֆոն ինքն է գրել քաղաքական, գործարարական և սոցիալական թեմաներ՝ լինելով լրագրող ու մեկնաբան: Նա իր լրագրողական արժանիքները

կարողանում էր օգտագործել, ինչպես նաև տիրապետում էր հարուստ բառապաշարի, որով և կարողանում էր գնահատել իր սեփական աշխատանքը: Դեֆոն հասարակ օտարական չի եղել, և քաղաքական գործունեությունը նրան բերել է լուրջ դժվարություններ, ինչից հետո նա ստիպված է եղել դառնալ Անգլիայի վարչապետի գաղտնի ծառայության ղեկավար (նա այդ առաջարկն ընդունել է ընտանիքի ծանր ֆինանսական պայմաններից ելնելով): Ռիչարդ Ստիլը, ով, ինչպես գիտենք, եղել է բրիտանական լրագրության հիմնադիրներից, ոչ միայն գլխավոր խմբագիր էր, այլև իր հրապարակումների հեղինակը:

Պատմական իրողությունները փաստում են, որ անհատական ժուռնալիզմի աստղային ժամանակաշրջանում եղել են հասարակական առաջընթացի շրջափուլեր, երբ անսովոր ժամանակները պահանջում էին բացառիկ անհատականություններ: Որպես օրինակ՝ ճշմարտացի ծառայողներ էին համարվում ֆրանսիացի ստեղծագործող լրագրողները, ովքեր իրենց աշխատանքներով 1789 թվականի ֆրանսիական հեղափոխության ժամանակ բարձրացրին անհատական ժուռնալիզմի դերը: 18-րդ դարի կեսերին ֆրանսիական լուսավորական-հանրագիտակները անդրադարձել են լրագրողական աշխատանքի կոնկրետության հարցին՝ առանձնացնելով լրագրողների 2 տեսակ. նրանցից մեկը փայլում է «արտացոլված լույսով»՝ մեկնաբանելով գրականության, գիտության և արվեստի նորությունները, իսկ մյուսը օժտված է բավարար տաղանդով և քաջությամբ, որպեսզի ծառայի գործընթացին: Այս ամենը տեղի է ունեցել 18-րդ դարում, իսկ ավելի ուշ՝ 19-րդ դարում, ձևավորվում է «նոր լրագրություն», երբ հիմնական գործառույթը հրապարակման մեջ տեղեկատվության տարածումն էր: Գերակշռող տեղը պատկանում էր ոչ թե «տեսակետներին ու կարծիքներին», այլ «նորություններին» և սենսացիայի հետապնդման տարրին (հիշենք, թե որ ժամանակաշրջանում էր սենսացիայի հետապնդումը գերիշխող, օրինակ՝ գերմանական «թռչող թռուցիկները» 15-16-րդ դարերում, որը տեղեկացնում էին հրաշքների, համաճարակների, բուժումների և այլնի մասին):

Չարցեր ինքնաստուգման համար

1. Ներկայացնել ամսագրերի ստեղծման պատմությունը:
2. Ինչպիսի՞ պայմաններում են ի հայտ եկել եվրոպական առաջին ամսագրերը:
3. Ներկայացնել առաջին գրականագիտական ամսագրերի ստեղծման պատմությունը:

- 4.Ներկայացնել Զ. Սվիֆթի լրագրողական գործունեությունը:
- 5.Ինչպիսի՞ փոփոխություններ առաջ բերեց «լուսավորչական» լրագրությունը:
- 6.Ի՞նչ է իրենից ներկայացնում անհատական ժուռնալիզմը:

ԹԵՄԱ 7

17-18-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՄՖԼԵՏՏԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ (2 ժամ դասախոսություն)

1642-1660թթ. անգլիական հեղափոխությունը պարարտ հող էր նախապատրաստել տեղական մամուլի սոցիալական մտքի զարգացման համար՝ միաժամանակ խթանելով նրա քանակական և որակական աճը: Քաղաքական մամուլն այսօրվան նորությունների պահանջարկը կտրուկ աճում է, և կարևոր նորությունները դառնում են առավել պահանջված: Անգլիական լրագրության զարգացման համար լրացուցիչ ազդակ էր փաստացի գրաքննության ոչնչացումը: Ճիշտ է, 1643թ. Երկար խորհրդարանը⁹ փորձել է այն վերականգնել, սակայն մինչև 1653թ. Կրոմվելյի բռնապետության հիմնադրումը այն ամբողջությամբ ընդունելու որոշումը հնարավոր չէր:

Նախահեղափոխական թերթերը բացառապես առևտրային բնույթի էին և առավելապես շահույթի կրկնապատկման նպատակ էին հետապնդում: Հեղափոխության սկզբնավորմամբ տպագրական գործը դառնում է քաղաքական պայքարի ակտիվ «մասնակից»՝ չդադարելով իրականացնել իր բուն առաքելությունը:

Անգլիական բուրժուական հեղափոխությունը նպաստել էր պարբերական մամուլի ստեղծման գործընթացին. 17-18-րդ դարերում լայն տարածում էր գտել բնական իրավունքի և հասարակական պայմանագրի տեսությունը՝ դառնալով առաջին բուրժուական հեղափոխության տեսական հիմքը:

Անգլիական և ֆրանսիական հեղափոխությունների գրեթե մեկդարյա ժամանակագրական տարբերության ընթացքում բնական իրավունքների և պայմանագրային պետության տեսությունը ենթարկվել էր որոշակի փոփոխությունների: Չնայած այս տեսության՝ 1789-ի մեկնա-

9. 1640-1653 թթ. և 1659-1660 թթ. Մեծ Բրիտանիայի պառլամենտի անվանումը, որի լիազորմար նիստը գումարվել է Կառլոս I-ի կողմից:

բանությունը խիստ տարբերվում էր 1642-ին առաջ քաշված գաղափարաբանությունից, հիմքերը, այնուամենայնիվ, մնում էին անփոփոխ:

Այս տեսությունը կյանքի էր կոչվել սոցիալական հարաբերությունների բացատրության հստակ պահանջով, որոնք ստեղծվել էին հասարակության մեջ մինչև նշված ժամանակաշրջանը և արմատական փոփոխության անհրաժեշտություն ունեին, քանի որ հին պետությանը ձեռնտու չէին նոր դասակարգերը: Այս տեսության հիմնադիրներից անգլիացի փիլիսոփա Թոմաս Հոբբսը¹⁰ 17-րդ դարի 40-ական թվականներին գրված իր «Քաղաքացուն» աշխատության մեջ բացատրում է ոչ թե Աստծո, այլ բնության կողմից ստեղծված պետության և իշխանության ծագումը: Ըստ Հոբբսի՝ իշխանությունը ձևավորվում է ժողովուրդների միջև կնքված պայմանագրի արդյունքում, համաձայն որի՝ մեկը ստանում էր իշխանություն, իսկ մյուսը անվտանգություն և կարգ, որը ապահովվում էր պետական մեքենայի օգնությամբ: Հոբբսը ուժեղ պետական կառավարման միապետության կողմնակից էր և պաշտպանում էր միապետական համակարգը, չնայած այն ծառայել է ժողովրդավարության զարգացմանը:

Անգլիական պամֆլետային լրագրության մեջ ավելի վառ, փայլուն ներկայացուցիչները եղել են միապետության հակառակորդներ: Նրանց տաղանդը մեծ ազդեցություն է ունեցել բուրժուական ղեկավարների հայացքների զարգացման մեջ հիմնականում ԱՄՆ-ում և Ֆրանսիայում: Մասնավորապես, ուշագրավ են Միլթոնը, Լիլբեռնը, Ջեյմսի Ռիչարդսոնը:

Բանաստեղծ, հասարակական գործիչ, հրապարակախոս Ջոն Միլթոնը ապրել է բուրժուական հասարակության մեջ Անգլիայում: Միլթոնը հեղափոխության մեջ էր հենց սկզբից: Քաղաքական պամֆլետները նրան ստիպել են լինել առաջին գաղափարախոսներից: Միլթոնի հեղափոխությունը եղել է սահմանափակ, բայց նա տնտեսական նպատակներ չէր հետապնդում, որը դրված էր անգլիական բուրժուազիայի հիմքում: Նրան հետաքրքրում էր գաղափարական կողմը: Ինչպես և բուրժուական հեղափոխության այլ ղեկավարներ, Միլթոնը նույնպես եղել է այդ «կոքերի ու պատրանքների» մասնակից: Այդ ժամանակա-

10. Թոմաս Հոբբս (անգլ.՝ Thomas Hobbes, ապրիլի 5, 1588, Westport - դեկտեմբերի 4, 1679, Դերբիշիր), անգլիացի ականավոր փիլիսոփա և գրող, հասարակական դաշինքի տեսության հեղինակ: Առավելապես հայտնի է պետության մասին իր «Լևիաթան» (*Leviathan or The Matter, Forme and Power of a Common Wealth Ecclesiasticall and Civil*, 1651) երկասիրությամբ:

հատվածում սոցիալական մտքի զարգացման մեջ մեծ դեր են ունեցել Միլթոնի պամֆլետները: Նա իր քննադատությունն սկսել է կաթոլիկ եկեղեցուց, այնուհետև քարոզել է ժողովրդավարական գաղափարներ: Միլթոնի «Թագավորի ու կառավարիչների իրավունքներն ու պարտականությունները» աշխատությունը Չամլզ Առաջինի դատավճռի անմիջական հիմնավորումն էր: Այդ աշխատությունում նա ձևակերպում էր ժողովրդավարության տեսության հիմնական դրույթները: Միլթոնը գրում է. «Մարդիկ բնությունից ծնվում են ազատ, իրենց մեջ կրելով Աստծուն, նրանք ունեն անավելություններ բոլոր կենդանի արարածների նկատմամբ, նրանք ծնվել են հրամայելու, այլ ոչ թե ենթարկվելու համար»:

17-րդ դարի երկրորդ կեսին Անգլիայում ի հայտ եկավ երգիծական մամուլը: Երգիծական հրապարակման օրինակ է «Շաբաթվա նորություններ Յոնից» շաբաթաթերթը: Այդ անսովոր անվան պատճառը լրագրողական հնարանքն էր, որն օգտագործվում էր 17-18-րդ դարերում: Թերթը հրապարակվում էր քաղաքական հակառակորդների անունից: Այդ հրատարակության էջերում Յոնի պապի խորհուրդներն են, թե ինչպես լավագույնս կառավարել Անգլիան: Այդ խորհուրդները չափազանցված և արքային էին հումորի տեսքով: Յոնի արքային էր ընդհատակյա: Բայց հետախուզական ծառայությունը աշխատել է ճիշտ, և շուտով ձերբակալվել է շաբաթաթերթի հրատարակիչ Յոնի Կարրը:

17-րդ դարի վերջում Անգլիայում կար 4 տեսակի պարբերական հրատարակություն՝ տեղեկատվական, վերլուծական, երգիծական և գովազդային: Առաջինը կոմերցիոն նպատակ էր հետապնդում և նախատեսված էր բոլորի համար: Նույնը կարելի է ասել գովազդային պարբերականների մասին, սակայն նրանք պատվեր ստանում էին ոչ թե ընթերցողներից, այլ գովազդային պատվիրատուներից: Նրանց լայն տարածումը պայմանավորված էր ոչ բնականոն իրավիճակով, որում հայտնվել է տպագրությունը՝ սահմանված որոշակի սահմանափակումներով: Վերլուծական հրապարակումները գովազդի նպատակ չէին հետապնդում, այլ քաղաքական հաջողություն: Ինչպես գովազդի դեպքում էր, այստեղ ևս թերթը ինքնանպատակ չէր, այլ միջոց էր հասնելու ավելի կարևոր նպատակի, լինի դա ապրանքի վաճառք, առգրավում թե իշխանության պահպանում:

Անհնար էր հաշվել առևտրական բնույթ կրող պարբերականները և ընդհատակյա երգիծական մամուլը: Իրենց քարոզչական բնույթով նրանք մոտ էին վերլուծականին և օգտագործվում էին որպես քաղա-

քական պայքարի միջոց: Տարբերությունը միայն քարոզչության ձևն էր: 17-րդ դարի վերջին վերլուծական և տեղեկատվական ժանրերի համադրումը էջերում հազվագյուտ երևույթ էր, չնայած հեղափոխության ժամանակ դրանք սովորական էին:

Թերթի դասավորվածությունը չափազանց պարզ էր: Որպես կանոն՝ թերթը իրենից ներկայացնում էր փոքր չափի թերթիկ, որտեղ 2 սյունակներում տեղադրվում էին նյութերը՝ առանձնացված կետերով: Խորագրերը հազվադեպ էին օգտագործվում:

Բարեփոխումների ժամանակ լուրերի պահանջարկը սովորականից ավելի պահանջված էր: Ինչպես ասել է Կարրի ելույթի համար մեղադրող դատախազը՝ «Շատ ծնողներ երեխաներին զրկում էին հացից, որպեսզի գնեն պամֆլետներ: Գայթակությունն այնքան մեծ էր, որ նրանց գրպաններում չէր մնում նույնիսկ 2 փեննի»: Չնայած երեխաների հանդեպ այդպիսի «հոգատարությանը»՝ ի հայտ են եկել նաև մի շարք ընդհատակյա թերթեր: Սակայն մամուլն այդ ժամանակ չէր կարողանում բավարարել նորությունների պահանջարկը: Այդ իսկ պատճառով նորից ի հայտ են գալիս «թռչող թռուցիկները»: Տեղեկությունների փոխանակման կարևոր վայր էին պանդոկները, որոնք բաժանված էին վիզերի և տորիների միջև: Այսպիսով՝ անգլիական լրագրության զարգացման առաջին շրջանում նորությունների առաջարկի և պահանջարկի միջև առկա անդունդն էր, և այդ անսովոր վիճակը պայմանավորված էր քաղաքական կառավարության հրամանով, որը գրաքննության շղթաներով նեղում էր տպագիր հրատարակությունների գործունեության իրականացմանը:

Անգլիական հրապարակախոսները զբաղված էին ընդհանուր ազատության և մասնավորապես՝ մամուլի ազատության հարցերի թեժ քննարկումներով:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ինչպիսի՞ն էր 17-18-րդ դարերի անգլիական քաղաքական լրագրությունը:
2. Բնութագրել անգլիական պամֆլետային լրագրության ներկայացուցիչների գործունեությունը:
3. Ներկայացնել Ջոն Միլթոնի քաղաքական պամֆլետները:
4. Ներկայացնել 17-րդ դարի անգլիական երգիծական մամուլը:

ԹԵՄԱ 8
ՄԱՍՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՆԳԼԻՎԿԱՆ ԿՈՆՑԵՊՏԻԱՆ
(2 ժամ դասախոսություն)

1. Մամուլի ազատության անգլիական կոնցեպցիան ժամանակի հասարակական-քաղաքական գործիչների ստեղծագործություններում:
2. Անգլիական բուրժուական հեղափոխությունը և լրագրությունը:
3. Լիբերտնի մամուլի ազատության մասին առաջարկը:

Բուրժուական հեղափոխությունը նոր լիցք հաղորդեց Անգլիայում տպագրության զարգացմանը: Առաջին հերթին լուծարվեց այսպես կոչված Աստղային պալատը, ինչին նպաստել է տպագրության ոլորտում պետության հսկողությունը: Կտրուկ ավելացել է հեղինակների թիվը, ովքեր ցանկանում էին իրենց տեսակետները հասցնել հանրությանը, փորձ ձեռք բերելով՝ իրենց հերթին ուշադրություն դարձնել սոցիալական խնդիրներին: Անգլիական մատենագետները և պատմաբանները կարծում են, որ 1641-1663թթ. ընկած ժամանակահատվածում ընդհանուր թողարկվել է 22, 255 տպագրական հրապարակում (գրքեր, պամֆլետներ, թերթեր): Հեղափոխության զարգացման հետ միաժամանակ միջոցառումներ էին ձեռնարկվում՝ անգլիական գրաքննությանը խիստ շրջանակների մեջ դնելու ուղղությամբ: Հեղափոխության առաջին փուլը ավարտվել է 1641թ. մայիսի 12-ին՝ Ստրաֆֆորդ թագավորի գլխավոր խորհրդականի մահվան դատավճռով, իսկ հուլիսի 22-ին պալատը թուլատրել է մամուլի մասին առաջին օրենքը «խորհրդարանի հանդիպումները մասին հաշվետվությունների զեկույցների արգելման պալատականների կարգը»: 1643թ. հունիսի 14-ին, առաջին քաղաքացիական պատերազմի ժամանակ, երբ նախաձեռնությունը դեռ թագավորի ձեռքում էր, խորհրդարանին ներկայացվեց տպագրության ազատության մասին որոշակի սահմանումներ: Այդ օրենքը ներկայացնում էր նախնական գրաքննություն և դրա խախտման համար սահմանված էր որոշակի պատասխանատվություն. «Ոչ մի գիրք կամ թերթիկ չէին կարող դաջվել, քանի դեռ դրանք նախատեսված չեն տվյալ ժողովրդի համար»:

Միլթոնն առաջինն էր, ով գրաքննությանը դեմ դուրս եկավ: Անդրադառնալով պատմությանը՝ նա նշում է, որ գրաքննության առաջին օրենքը տրվել է պապի կողմից: Սկզբում պատմությունը չգիտեր նմանատիպ օրենսդրություններ. Կաթոլիկ եկեղեցին իր կապանքները պար-

տադրել է հոգևոր-մշակութային և հասարակական կյանքին. դա այն էր, ինչը Միլթոնի կողմից դիտվում էր որպես չարի աղբյուր, այս դեպքում՝ գրաքննություն: Անգլիական խորհրդարանը Աստղային պալատի հետ վերացրել է գրաքննությունը: Ամենամեծ անարդարությունը այն վերականգնելն էր: Միլթոնը կարծում էր, որ անհնար է գտնել գրաքննիչների, ովքեր կարող են ճշգրիտ որոշել, թե արտադրանքը կյանքի իրավունք ունի թե ոչ, տալ դրան օբյեկտիվ գնահատական: Սեկ մարդը չի կարող դատել ցանկացած գաղափարի իրավունք կամ օգտակարության մասին: Քանի որ գաղափարները՝ «բարին և չարը, ստեղծվում են միաժամանակ», մարդը, Միլթոնի կարծիքով, պետք է իմանա և՛ դա, և՛ մյուսը, որպեսզի կարողանա տարբերել մեկը մյուսից: Մարդը պետք է օժտված լինի ուրիշին լսելու կարողությամբ. ինչ են ասում ուրիշները, և ինչ է ուզում ասել ինքը. «Տվե՛ք ինձ ազատություն իմանալու, արտահայտելու իմ մտքերը, և ամենակարևորը, դատելու իմ սեփական խղճով», - պահանջում էր Միլթոնը:

Ջոն Միլթոնին համարում են բուրժուական հեղափոխության մամուլի ազատության հիմնադիր: Նա խոսքի ազատության վրա դրել է իդեալիստական հայեցակարգի սկզբունքները, որոնց հիման վրա զարգացել է լրագրությունը: Խոսելով մամուլի ազատության մասին՝ նկատի ունեւր միայն «լավագույն մարդկանց», միջին խավը: Նա այդ սկզբունքը չէր տարածում աղքատների մեջ, որովհետև կարծում էր, որ ազատությունն ու իշխանությունը հասանելի չեն «ամբոխին»: Նա միայն պաշտպանել է իր իրավունքը խոսքի ազատության մասին: Չառլզ Առաջինի մահից հետո և Անգլիայի հանրապետության հաստատումից հետո, Միլթոնը 3 տարվա ընթացքում (1649-1652թթ.) զբաղեցրել է կառավարության Պետական խորհրդի քարտուղարի պաշտոնը և կատարել գրաքննիչի պարտականությունները, ինչը ցույց է տալիս, որ նա մամուլի ազատության պահանջարկը չի համարել բացարձակ: Ավելին՝ կուսակցությունը, որին նա պատկանում էր, իրականացրել է մի շարք միջոցառումներ՝ ուղղված ժողովրդավարական շարժման լեվելների դեմ: Այդ շարժման գաղափարախոսը Լիլբեռն է: Նա մշակել է մամուլի ազատության տեսությունը՝ առաջադրված Միլթոնի կողմից: Լիլբեռնը մամուլի ազատության մասին առաջարկը դնում էր մի կողմ՝ պահանջելով ուրիշ մենաշնորհների ոչնչացումը: Առաջինը առևտրի ու արտադրության, երկրորդը՝ մենաշնորհների քարոզումը, երրորդը՝ մամուլի մենաշնորհումը:

Երբ Լիլբեռնին պարզ դարձավ, որ խորհրդարանի իշխանությունը զավթած անկախները չէին իրականացնի ժողովրդին տված խոստում-

ները, այլ օգտագործելու են իշխանությունը իրենց սեփական դասի համար, որը Երիցականների դիկտատուրայից անցավ Անկախների դիկտատուրային, նա հանդես է եկել նոր պահանջով («Անգլիայի նոր նպատակները») «ազատ կյանքի ստեղծումը»: Խորհրդարանը գործնականում չի գիտակցում 1644թ. Միլթոնի կողմից առաջադրված մամուլի ազատության սկզբունքը: Լիբերալ անկախներից պահանջել էր գործնականում իրագործել այդ սկզբունքը: «Մամուլը պետք է լինի ազատ,- գրել է նա,- այդ ազատությունը չափազանց կարևոր է հանրապետության համար»:

Լիբերալ մամուլի ազատության մասին նախատեսել է սահմանափակումներ՝ պահանջելով արտադրանքի արգելքը, որը արդարացնում էր բռնատիրությունը: Ազատ մամուլը նրան անհրաժեշտ էր որպես գործիք՝ դավաճանների ու բռնակալների պայքարի դեմ, այդ թվում՝ Կրոմվելի:

Մամուլի ազատության պահանջը, որին դրդել է Միլթոնը և զարգացրել է Լիբերալը, չէր կարող իրականացված լինել անգլիական բուրժուական հեղափոխության ընթացքում և ընդհանրապես հասարակության մեջ: Վ. Ի. Լենինը գրել է, որ մամուլի ազատության կարգախոսը «դարձել է համաշխարհային միջնադարի վերջից մինչև 19-րդ դարը: Ինչու: Որովհետև նա արտահայտել է առաջադեմ բուրժուազիայի, այսինքն՝ քահանաների և թագավորների, ֆեոդալների ու հողատերերի պայքար»: Բայց, երբ բուրժուազիան հայտնվել է կառավարության դեկին, այն անմիջապես սկսել է օգտագործել սահմանափակումներ՝ ուղղված ինչպես ռոյալիստների դեմ, այնպես էլ ժողովրդի ներկայացուցիչների դեմ, ովքեր իրենց հեղափոխական պահանջները ավելի հեռուն էին տանում և բուրժուազիայի շահերի սպառնալիք դառնում:

17-րդ դարի անգլիական բուրժուական հեղափոխության վաստակն այն է, որ նա հասարակական մտքի առջև դրել է առաջնային նշանակություն ունեցող մի շարք հարցեր, իսկ նրա առաջնորդները հիմք են դրել բուրժուական գաղափարախոսությանը, բայց այդ խնդիրները լուծել նրան չի հաջողվել, ավելի շուտ, դրանք ստանում էին միակողմանի լուծում: Հիմնական հարցը հասարակության գերիշխող դիրքի հարցն էր. անգլիական հեղափոխությունը որոշել է, հետևաբար անգլիական բուրժուազիան ուներ հիմքեր կասկածելու, որ Անգլիայում գոյություն ունի մամուլի ազատություն:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ինչպիսի՞ արտահայտություն գտավ մամուլի ազատության անգլիական կոնցեպցիան ժամանակի հասարակական-քաղաքական գործիչների ստեղծագործություններում:

2. Ինչպե՞ս է անգլիական բուրժուական հեղափոխությունն ազդել հասարակական մտքի զարգացման վրա:

3. Ներկայացնել Լիլբեռնի մամուլի ազատության մասին առաջարկը:

ԹԵՄԱ 9

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ: ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: ՎԻՉԵՐԻ ԵՎ ՏՈՐԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ: (2 ժամ դասախոսություն)

1. 18-րդ դարի պամֆլետային լրագրության առանձնահատկությունները:

2. Տպագրություն և գրաքննություն:

3. Հակամարտություններ և խնդիրներ:

4. Վիգերի և տորիների պայքարը:

Գրատպության հայտնաբերումից գրեթե անմիջապես հետո նախնական գրաքննության ինստիտուտի համատարած ներդրումը պետության արձագանքն էր գաղափարների, կարծիքների ու տեղեկությունների անվերահսկելի տարածման նկատմամբ: Արդեն 1502թ. Իսպանիայում ընդունվեց օրենք՝ համաձայն որի բոլոր տպագիր հրատարակությունները պարտադիր պետք է անցնեին նախնական գրաքննություն: Գրաքննական գործառույթները ստանձել էին պետական ու եկեղեցական կառույցները: 1521թ. Վորմսյան էդիկտը, որն ուղղված էր Լյուբերի դեմ, նախատեսում էր նախնական գրաքննության ներդրումը Գերմանիայում:

Բարեփոխման հաղթանակի հանդեպ կաթոլիկ եկեղեցու արձագանքը 1559թ. առաջին «Արգելված գրքերի ինդեքսի» հայտնվելն էր շեղում: Այն հրատարակվում էր Վատիկանի կողմից ու գրաքննության տակ էր դնում կաթոլիկ բոլոր պետությունների տարածքում շրջանառվող գրքերը: Սակայն «Արգելված գրքերի ինդեքսը» հետապնդում էր ոչ միայն արգելված գրքեր գրելու, հրատարակելու ու տարածելու, այլև

կարդալու ու պահելու նպատակ: Գրաքննության դեմ պայքարը սրացվեց սոցիալական հեղաշրջումների ժամանակ, երբ կառավարությունն արդեն ի վիճակի չէր վերահսկելու գրաքննության արգելքը: 1644թ. դատարան բերվեց բանաստեղծ և հրապարակախոս Ջոն Միլթոնը, ով մեղադրում էր գրավաճառներին գրաքննության օրենքի խախտման համար: Պատահական չէ, որ Ջոն Միլթոնը իր հայտնի «Արեոպագատիկայում» եկեղեցական գրաքննությունը համեմատել է ապոկալիպսիսի «գաղտնի հրեշի» հետ:

Չենց գրաքննության ազդեցության պատճառով է, որ Անգլիայում ու Ֆրանսիայում առաջին տպագիր հրատարակությունները հայտնվել են համեմատաբար ուշ: Անգլիայում 1538թ. ընդունվել է օրենք, ըստ որի ցանկացած տպագրիչ գործունեություն իրականացնելու համար պետք է ստանա թագավորական արտոնագիր, իսկ տպագրիչների կազմակերպությունը՝ «Գրահրատարակիչների ընկերությունը», պարտավոր էր ոչ միայն ներկայացնել հրատարակվող նյութերը նախնական գրաքննության, այլև հետևել կազմակերպության անդամների գործունեությանը:

1585թ. օրդոնանսը (թագավորական հրամանագիր Անգլիայում ու Ֆրանսիայում) կարգավորում էր տպագրական արտադրանքի հայտնվելը ու սահմանում թագավորությունում գործող տպարանների քանակը (պետք է չգերազանցեր 20-ը): Անգլիայում գրաքննության գործառույթները հանձնարարվել են թագավորական Գաղտնի խորհրդին կից գործող այսպես կոչված «Աստղային պալատին», որը 16-17 դդ. մանուկ գործերի կոմիտեի դեր էր կատարում: «Աստղային պալատի» գլխավոր գրաքննիչների իրավունքները ստանձնել են Լոնդոնյան ու Կենտերբերյան արքեպիսկոպոսները, առանց որոնց հաստատումի չէր կարող հրատարակվել ոչ մի տպագիր տեքստ: Ֆրանսիայում 1561թ. օրենքը կարգադրում էր գանակոծել «զրպարտող» թուղիկների և պամֆլետների հեղինակներին ու տարածողներին: Կրկնակի օրինազանցության դեպքում մեղավոր անձինք ենթարկվում էին մահապատժի: Խորհրդարանը պարտավոր էր յուրաքանչյուր տպարանում փնտրել գիրք, որը տպագրվում էր առանց թույլտվության, և ոչնչացնել դրանք, իսկ սեփականատիրոջը՝ ձերբակալել: 1649թ. խորհրդարանը հրատարակում է «Ակտ չարտոնագրված և աղաղակով հրատարակվող գրքերի և գրատպության կարգավորման մասին» կրկնելով նախորդ արգելքները: Խորհրդարանի այս օրենքները մասամբ ուղղված էին ռոյալիստներին, բայց դրանք նախատեսված էին պաշտպանելու խորհրդարանին գաղափարախոսների և ծախ թևի ազդեցությունից, որը մոտ

էր ժողովրդական զանգվածին, հատկապէս Լիլբեռնին և Ուինսթենլիին: Կոշտ գրաքննական ճնշման պայմաններում անգլիական ու ֆրանսիական թերթերի հայտնվելու համար յուրատեսակ «կատալիզատորի» դեր էր խաղում Դոլանդիան, որը XVII դարում Եվրոպայի ամենալիբերալ երկիրն էր:

Գրաքննության սահմանափակումներն ու խիստ պատժամիջոցները առաջին հերթին վերաբերում էին կրոնական ու քաղաքական հարցերին. դրա համար առաջին ձեռագիր ու տպագիր թերթերը պարունակում էին արտասահմանյան տեղեկատվություն, իսկ արգելված թեմաներով հրապարակումները տեղ են գտել կրոնական ու քաղաքական պամֆլետներում, թռուցիկներում և այլ հրապարակումներում՝ ձգտելով շրջանցել գրաքննությունը: Նախնական գրաքննությունն Անգլիայում անհետացել է «Փառահեղ հեղափոխություն»-ից հետո: Ըստ Յուրգեն Զաբերմասի՝ «ժողովրդավարական ընթացակարգի իմաստն այն է, որ համալսարանականացված ձևերը անհրաժեշտ են կյանքի մտքի ձևավորման համար»:

1688թ. Անգլիայում կատարվել է «Փառավոր հեղափոխություն»: Այն հանգեցրել է Զակոբ 2-րդ թագավորի անկմանը և Վիլիելմ Օրանսկիի գահակալության գալույն: Այս իրադարձությունը վերջ է դրել իշխանության մենաշնորհին: Նոր թագավորը օգտվում էր վիգերի աջակցությունից: Նրա թագավորության ընթացքում տեղի է ունեցել հասարակական կյանքի ազատականացում, որը վերաբերում էր նաև տպագրությանը: Անգլիական լրագրության մեջ կարևոր իրադարձությունը 1695թ. տեղի ունեցած գրաքննության վերացումն էր: Դրանից հետո սկսվում է պարբերական մամուլի արագ զարգացումը. հայտնվում են մեծ քանակով հրատարակություններ, որոնք տեղեկացնում էին, բանավիճում ու լուսաբանում էին իրենց յուրաքանչյուր քայլը:

1702թ. Անգլիայում սկսվեց հրատարակվել առաջին օրաթերթը («Daily Courant»): 18-րդ դարի սկզբին թերթերի մեծ մասը պարունակում էր տեղեկություններ ու վերլուծություններ: Այդ մեթոդն առաջինը կիրառել է Դ. Դեֆոն իր «Review» թերթում: Սկսում նա եղել է հավատարիմ վիգ, այնուհետև տեղափոխվել է տորիների ճամբար (պատճառը՝ Իսպանայի ժառանգության համար արյունալի պատերազմն էր):

Տորիների դիրքորոշումը ոչ պակաս հետևողականորեն բավարարել է «Examiner» (1710-1714թթ.) թերթը, որը հրատարակվում էր Բոլինգբրոկի և Սվիֆթի կողմից: Քանի որ Բոլինգբրոկը եղել է նախարար, թերթը դարձել է պետական մարմին: Վիգերի հետ հակասությունը դարձել է դառնություն ու կոպտություն, որը հանգեցրել է քաղաքական կրքերի

սրացմանը: Գոհ չլինելով տպագիր խոսքից, Բոլինգբրոկը բազմիցս ձերբակալել է ու հալածել վիզերի թերթի խմբագիրներին: Հրատարակվում էին նորարարական թերթեր, որոնք մեծ ազդեցություն են թողել լրագրության զարգացման վրա ոչ միայն Անգլիայում, այլև նրա սահմաններից հեռու:

18-րդ դարի վերջին ֆրանսիական հեղափոխության ազդեցության տակ առաջացել և աճել է անգլիական հասարակական մտքի ծախս արմատական ուղղությունը: 1792-1795թթ. գործում էր ժողովրդի բարեկանների հասարակությունը, որի մեջ մտնում էին մի շարք հայտնի լրագրողներ և գրական գործիչներ, ինչպիսիք են Քոլրիջը, Մակկինթոնը, Շերիդանը, Սոյուարտը և ուրիշներ: 1802թ., երբ կարճ ժամանակում իշխանություն եկան վիզերը, և լրագրողների հանդեպ հետապնդումները դադարեցվեցին, Քոլրիջը «Morning Post» թերթում հրատարակում է հոդված, որտեղ նա պարզաբանել է իր ծրագիրը՝ ընդգրկելով ժողովրդավարացման ընտրական իրավունքը և «կյանքի բարելավման համար յուրաքանչյուրի իրավունքը»: Հետաքրքիր էր, որ ծրագիրը չէր պարունակում հանրապետության պահանջարկը: Ավանդական բրիտանական միապետությունն այստեղ իր դերն էր խաղում:

1760-80-ական թվականներին բրիտանական մամուլում կարևոր դիրք ուներ Վուդֆոլների ընտանիքը: Այդ ժամանակ ավելի տարածված օրաթերթերից էր «Public advertiser»-ը (1736-1802թթ.), որը լույս էր տեսնում Հենրի Վուդֆոլի խմբագրությամբ: 1770թ. ընթացքում նրա շրջանառությունը հասել է 3000 օրինակի: Ընդհանուր առմամբ Վուդֆոլները վիզերի կողմնակիցներ էին, թեև ներկայացնում էին իրենց թերթերը ընդդիմադիր հայացքների համար:

Մեկ այլ ազդեցիկ թերթ էր Վուդֆոլի «Morning Chronicle» (1770-1862թթ.): Նրա գլխավոր խմբագիրը՝ Ուիլյամ Վուդֆոլը (Հենրի Վուդֆոլի եղբայրը), առանձնանում էր իր ֆենոմենալ հիշողությամբ: Խորհրդարանում ներկա գտնվելով՝ նա հիշում էր քննարկումները բառ առ բառ, առանց օգտվելու գրառումներից: Թերթը մանրամասն հայտնում էր խորհրդարանի զեկույցների վերաբերյալ, իսկ խմբագրին ժամանակակիցները կոչում էին «հիշողություն» Վուդֆոլ: Բացի թվարկված թերթերից՝ Վուդֆոլների կլանին էին պատկանում «Daily post», «General advertiser» և այլ բազմաթիվ պարբերականներ: Բայց աստիճանաբար Վուդֆոլների մամուլն ընկնում էր և 1789թ. «Առավոտյան քրոնիկա» գնում է շոտլանդացի ձեռնարկատեր Ջեյմս Փերին: Նոր հրատարակչի ի հայտ գալով՝ տեղի է ունենում թերթի վերածնունդը. 1790-ական թվականներին այն դառնում է ամենատարածվածը:

երկրում: Լրագրության պատմության մեջ այստեղ առաջին անգամ մասնագիտական լրագրողներ էին վարձում: Սկզբում նրանց դժվարությամբ են թողել խորհրդարան, ինչպես սովորաբար նման դեպքեր լինում են և պետք էր կաշառք տալ: Հետևաբար բոլորը գոհ էին և ընթերցողները, ովքեր տեղեկություն էին ստանում խորհրդարանի պատերի տակ, և այդ պատերի դռնապան ոմն Բելլամը, ով արագ հարստացավ և դարձավ մի քանի պարբերականների համասեփականատեր:

Դրանից հետո թղթակցի մասնագիտությունը ամուր հաստատվել է լրագրության մեջ: Ֆրանսիայի հետ պատերազմի ժամանակ (1793-1815թթ.) ի հայտ են եկել ռազմական լրագրողներ, ովքեր ուղեկցում էին բանակին և ներկայացնում ռեպորտաժներ պատերազմից: Հենց ինքը՝ Փերին, եղել է հեղափոխական Ֆրանսիայում 1792թ., որտեղից գրում էր ռեպորտաժներ, որոնք հետաքրքրում էին ընթերցողներին: Գնելով «Morning Chronicle»-ը՝ Փերին չի փոխում վիզերի մասին կարծիքը և ինչպես բոլոր վիզ խմբագիրները, ենթարկվում էր հալածանքների: Չնայած Անգլիան և Ֆրանսիան պատերազմում էին, լիբերալ հայացքների տեր շատ անգլիացիներ սկզբում համակրում էին հանրապետականներին, այնուհետև՝ նապոլեոնյան Ֆրանսիային, և հանդես էին գալիս տորիների կառավարության դեմ՝ վերականգնելով այդ երկրում Բուրբոնների դինաստիան: Հնարավոր էր, որ հասարակական միտքը պատերազմի ժամանակ պահանջում էր մեծ քաջություն, որը շատ հեռու էր ոչ բոլորից: «Առավոտյան քրոնիկա»-ն եղել է միակ խոշոր բրիտանական թերթը, որը հանդես է եկել 1815թ. սկսվող պատերազմի դեմ. էլբա կղզու՝ Նապոլեոնի վերադարձից հետո: Փերին այդ թերթը խմբագրել ու հրատարակել է մինչև իր մահը (1821թ.), և մինչև այդ ժամանակները թերթը մնացել է ամենատարածված թերթերի շարքում:

Հարցեր ինքնաստուգման համար

1.Որո՞նք են 18-րդ դարի պամֆլետային լրագրության առանձնահատկությունները:

2.Ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ վիզերի և տորիների պայքարը հասարակական մտքի զարգացման վրա:

3.Ինչպիսի՞ ժանրային փոփոխություններ տեղի ունեցան 19-րդ դարի անգլիական պարբերական մամուլի պատմության մեջ:

ԹԵՄԱ 10

ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀՅՈՒՄԻՍԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ 18-ՐԴ ԴԱՐԻ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԵՐԻՆ (2 ժամ դասախոսություն)

- 1. Անգլիական Ամերիկայի լրագրության ստեղծման պատմությունը:*
- 2. Ամերիկայի հարավային գաղութների լրագրության ստեղծման պատմությունը:*
- 3. Հյուսիսային Ամերիկայի անգլիական գաղութների թերթերի լեզուն:*

17-րդ դարի բուրժուական հեղափոխության քաղաքական արդյունքը եղել է սահմանադրական միապետության ստեղծումը, որը նպաստել է Անգլիայի տնտեսական զարգացմանը: Ոչ պակաս ազդեցություն են ունեցել հեղափոխության ժամանակ ծնված նոր գաղափարները, որոնք բարձրացվել են հեղինակների կողմից հասարակական կարծիքի հիման վրա, Եվրոպայում սոցիալական մտքի զարգացման շրջանում, ինչպես նաև Ամերիկայում 18-րդ դարում:

Ամերիկյան հեղափոխությունն այն առումով էր հայտնի, որ այն անգլիականի շարունակությունն էր, քանի որ խոսքը վերաբերում էր անգլիական գաղութներին, որոնք բնակեցված են Եվրոպայից, այդ թվում՝ Մեծ Բրիտանիայի սահմաններից դուրս, որոնք ենթարկվում էին այդ երկրի կառավարության օրենքներին: Բայց այս հեղափոխությունն ունեցել է իր ուրույն բնույթը: Դրա առանձնահատկությունն այն էր, որ շարժվում էր 2 ուղղությամբ: Առաջինը հակազաղութային ազատագրական պայքարն էր հանուն հայրենիքի անկախության: Երկրորդը տեղական ազնվականության և ժողովրդավարական շերտերի՝ ամերիկյան «տորիների» և «վիգերի» միջև պայքարն էր: Այդ 2 ուղղություններն էլ զարգացել են իրար զուգահեռ՝ գրեթե բոլոր ամերիկացիներին դարձնելով հեղափոխականներ, համախոհներ, բայց մինչև որոշակի աստիճանի, որից հետո նրանք դարձել են թշնամիներ: Հենց ամերիկյան բուրժուական հեղափոխության ժամանակ դրվեցին այսօրվա Հանրապետական և ժողովրդավարական կուսակցությունների հիմքերը:

Իտալական առաջին զանգվածային լրատվամիջոցների կարևորագույն առանձնահատկությունն այն էր, որ գրեթե չէին խոսում այն ժամանակների Իտալիայի ներքին խնդիրների մասին: 18-րդ դարավերջի և 19-րդ դարասկզբի ամենանշանակալի հրատարակչություններից էր «Kaffe» («Սրճարան») հանրագիտարանային ամսագիրը և իտալացի գրող և դրամատուրգ Կառլո Գոցցիի կողմից հրատարակվող «L'Osservatore» («Դիտորդ») գրականագիտական ամսաթերթը:

Ժամանակակից իտալական թերթերը ձևավորվել են ֆրանսիական և անգլիական ՋԼՄ-ների ազդեցությամբ, սակայն դրանց տպաքանակը սակավաթիվ էր: Տպաքանակի ռեկորդակիրը համարվում է «Sekoli» («Դար») միլանական թերթը՝ 100-120 հազար տպաքանակով (Անգլիայում և Ֆրանսիայում թերթերի տպաքանակը առավելագույնս հասնում է 1 միլիոնի): Երկրորդը միլանական «Corriere della Sera» («Երեկոյան փոստ») է՝ 90 հազար տպաքանակով, հաջորդը՝ «La Stampa» («Մամուլ»)՝ 60 հազար տպաքանակով: Նույնիսկ առաջատար իտալական թերթերն ունենին ավելի քիչ տպաքանակ՝ հռոմեական «Missadzhero» («Լրատու») և նեոպոլիտանական «Mattino» («Առավոտ») պարբերականները ունեն 20-30 հազար տպաքանակ: Իտալական թերթերի մեծամասնության տպաքանակը չէր գերազանցում 5 հազար տպաքանակը, սակայն հարկ է նշել, որ նույնիսկ ամենափոքր քաղաքները ևս ունեին իրենց հրատարակչությունները, օրինակ՝ Բերգամոյում հրատարակվում էին երեք օրաթերթ:

Տարիների ընթացքում Իտալիայում ակտիվորեն զարգացել է կուսակցական մամուլը, հատկապես՝ հանրապետականների, սոցիալիստների և կղերականների: Հանրապետական կուսակցությունը հրատարակում էր երկու օրաթերթ՝ «Giornale del Popolo» («Ազգային թերթ») և «Italia del Popolo» («Ազգային Իտալիա»), իտալական սոցիալիստական կուսակցությունը հրատարակում էր ավելի քան 50 պարբերականներ, այդ թվում «Avanti» («Առաջ», Ռոմն), «Tempo» («Ժամանակ», Մի-

լան): Կղերականները օրաթերթեր ունեին յուրաքանչյուր քաղաքում, որոնց գլխավոր հրատարակչությունը Վասիլյանի մամուլի օրգանն էր՝ «Ossorvatore Romano» («Յռնմեական դիտորդ»):

Այսօր Իտալիան նախկինի պես օրաթերթային մամուլի զարգացման մակարդակով հետ է մնում, իսկ ահա ամսագրային պարրբերականների քանակի առումով առաջատարի դիրքում է: Առավել հայտնի է «Sorrizi e kontsoni TV» («Յեռուստատեսության երգեր և ծիծաղներ») հեռուստածրագրերի ամսագիրը, ավտոսիրողների համար նախատեսված «Automobile» ամսագիրը, «Famille chrétienne» («Քրիստոնյա ընտանիք») շաբաթաթերթը, որոնց տպաքանակը հասնում է 500 հազարի:

Այսօր խոշորագույն թերթեր են համարվում «Repubblica» (Յռն, 600-700 հազար տպաքանակ), «Corriere della sera» («Երեկոյան փոստ», փոստ, 90 հազ. օրինակ) և «Stampa» («Մամուլ», Թուրին, 60 հազ. օրինակ): Պետությունը թերթերի և ամսագրերի հրատարակչներին տրամադրում է սուբսիդիաներ և նպաստներ, ազատում է եկամտահարկից, զեղչեր է սահմանում թղթի համար: Տպագրության ֆինանսավորման հիմքը եղել ու մնում է գովազդը:

1924 թվականից Իտալիայում գործում է ռադիոհեռարձակումը, իսկ հեռուստահեռարձակումը սկսվել է 1954 թվականից և մինչև 1977 թվականը եղել է պետական: 1984 թվականին երկրում հաշվում էին 14 մլն հեռուստաբաժանորդ և 15 մլն մշտական ռադիոյի ունկնդիրներ:

Երկրի պատմությունը արտացոլված է նրա մամուլի ստեղծման և զարգացման պատմության մեջ, և դրա վառ օրինակը Իսպանիան է, որն ունի հին և հարուստ պատմություն: Իսպանիան ամենախոշոր գաղութային կայսրությունն է, ծովերի «թագուհին», նոր հողերի հայտնագործողը:

Իսպանիայում առաջին տպարանը հայտնվել է 15-րդ դարում, իսկ առաջին թերթի՝ 1661 թվականին լույս տեսած «Gaseta Nueva de Madrid»-ի (որտեղ խոսվում էր «աշխարհի մեծ մասում տեղի ունեցող» ռազմաքաղաքական իրադարձությունների մասին) հիմնադրումը կայուն են Խուան Ավստրիացու անվան հետ: Երկու տարվա ընթացքում լույս է տեսել թերթի 20 համար, յուրաքանչյուրը՝ 8 սյունակի վրա:

Իսպանական մամուլի առանձնահատկությունը կարելի է համարել մամուլի ցածր ժողովրդականությունը, որի պատճառը մասամբ այն է, որ թերթը որպես տեղեկատվության միջոց հեղինակագրկվել էր բռնապետության տարիներին: 40 միլիոն բնակչությանը Իսպանիայում հրատարակվում է ընդամենը 120 օրաթերթ (ընդ որում՝ 12 համազգային),

72 շրջանային թերթեր լույս են տեսնում անկանոն և սահմանափակ տպաքանակով: Երկուշաբթի օրերին վարչական կենտրոնների կողմից հրատարակվում են 30 թերթեր, որոնց տպաքանակը կազմում է 50-100 հազար օրինակ:

Դեռևս ֆաշիստական ռեժիմի ժամանակներից ի վեր Իսպանիայում, ըստ օրենքի, պրոֆեսիոնալ լրագրող համարվում է այն մասնագետը, ով ունի լրագրողի համապատասխան դիպլոմ:

Իսպանական թերթերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ **«անկախ»(մասնավոր)**

կուսակցական
պետական

Սովորաբար մասնավոր թերթերի և ամսագրերի ակցիաների փաթեթը պատկանում է մենաշնորհներին և բանկերին, որոնք դրանց վրա անհրաժեշտ ազդեցություն են գործում: Տեղեկատվական արտադրությունում գործում են վեց խմբեր, որոնք կառավարում են մամուլի մեծ մասը. «Prince Hispaniola», «Editorial cattolica», «Conte Godot», «Iglesia», «Opus Dei», «Mundo». Խոշոր թերթերից է «A-Be-Se» (հրատարակվում է Մադրիդում և Սեվիլյեում, 200 հազ. օրինակ) և «Ai» («Արդեն», հիմնադրվել է 1935 թվականին, 110 հազ. օրինակ):

Սակավաթիվ են օրաթերթերը, որոնցից ամենահայտնի ու ամենաազդեցիկը համարվում են «El Pais» («Երկիր», 1976 թ., 300 հազ. օրինակ) և «Vanguard» («Ավանգարդ», հիմնադրվել է 1881 թվականին, 300 հազ. օրինակ): Քաղաքական կուսակցությունների մեծամասնությունն ունեն իրենց թերթերն ու ամսագրերը. օրինակ 1886 թվականից շաբաթական կտրվածքով լույս է տեսնում սոցիալիստական աշխատանքային կուսակցության «Սոսիալիստա» ամսագիրը, սակայն հարկ է նշել, որ ոչ բոլոր հրատարակչություններն են բացահայտում կուսակցությունների հետ իրենց կապերը:

EFE-ն իսպանալեզու աշխարհի ամենախոշոր լրատվական գործակալությունն է, համարվում է բաժնետիրական ընկերություն, սակայն բաժնետոմսերի 33%-ը պատկանում է պետությանը և նույնքան էլ պետության կողմից վերահսկվող արդյունաբերության ազգային ինստիտուտի կողմից:

Չարցեր ինքնաստուգման համար

1. Ներկայացնել Իտալիայի և Իսպանիայի ՁԼՍ-ների ստեղծման պատմությունը:
2. Բնութագրել Իտալիայի և Իսպանիայի առաջին պարբերական հրատարակչությունները:
3. Ներկայացնել մամուլի մասին ազգային օրենսդրության զարգացման պատմությունը:
4. Բնութագրել Իտալիայի և Իսպանիայի ժամանակակից ՁԼՍ-ների կառուցակարգը:
5. Անվանել այդ երկրների հիմնական հրատարակչությունները: Բնութագրել դրանք:
6. Ինչպիսի՞ն են այս երկրների ՁԼՍ-ների ֆինանսավորման հիմնական աղբյուրները:
7. Որո՞նք են իտալական և իսպանական թերթերի քաղաքական և տնտեսական առանձնահատկությունները:
8. Որո՞նք են Իտալիայի և Իսպանիայի ՁԼՍ-ների զարգացման կարևոր միտումները:

ԹԵՄԱ 16

ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՁԼՍ-ՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻ ՓՈՒԼԸ (4 ժամ դասախոսություն)

1. 18-19-րդ դարերի Սկանդինավյան երկրների ժուռնալիստիկայի զարգացման պատմությունը:
2. Սկանդինավյան երկրների ՁԼՍ-ների զարգացման պատմական առանձնահատկությունը:
3. Նորվեգիայի, Դանիայի, Ֆինլանդիայի, Շվեդիայի և Իսլանդիայի կարևորագույն պարբերականները, դրանց պատմությունը և գործունեության սկզբունքները:

Չյուսիսային Եվրոպայում՝ Սկանդինավյան երկրներում (Դանիա, Իսլանդիան, Նորվեգիա, Ֆինլանդիա, Շվեդիա), լրագրությունը զարգացել է հիմնականում 18-րդ դարում, չնայած շվեդական առաջին թերթը՝ «Ordinari Post-Zijddender»-ը լույս է տեսել 1645թ.: Չեստագայում այն դարձել է թագավորության պաշտոնական օրգանը: Թերթի անվանումը մի քանի անգամ փոխվել է, տարբեր ժամանակներում նրա խմբագիր-

ներն էին շվեդական հայտնի գրողներ: Սակայն Յյուսիսային Եվրոպայում առավել զարգացած էին մանկական պարբերականները: Այս երկրում 1770 թ. Քրիստիան 7-րդ թագավորը հռչակել է մամուլի ազատություն, որը որոշակի փոփոխությունների է ենթարկվել ֆրանսիական հեղափոխությունից հետո: 1663 թ. Կոպենհագենում հայտնվել է առաջին թերթը, որը տպագրվել է գերմաներեն: 1666թ. սկսել են լույս տեսնել դանիերեն լեզվով թերթեր. դրանք էին՝ «Danske Mercurius»-ը (1666թ.), «Extraordinair Relationes»-ը (1672թ.) և այլ թերթեր: Դանիայում շատ վաղ ծագել են նաև ամսագրերը: Դրանցից առաջինը՝ «Der Fremde»-ը («Անճանոթը»), նույնպես լույս է տեսել գերմաներեն: 18-րդ դարի 50-ական թվականներին լույս են տեսնում դանիերեն ամսագրեր: Առավել հայտնի էր 80-90-ական թվականներին հրատարակվող «Minerva» ամսագիրը:

Նորվեգական առաջին թերթը հրատարակվել է 1763 թ., սակայն հետագայում նորվեգական լրագրությունը զարգացել է շատ դանդաղ. միայն 19-րդ դարի 20-30-ական թվականներին, Շվեդիայի մշակութային ազատատենչ գաղափարների ազդեցության շնորհիվ, Նորվեգիայում լրագրությունը զարգացավ: Սկանդինավյան երկրներից յուրաքանչյուրի թերթերն ունեն իրենց յուրահատկությունները: Օրինակ՝ Դանիայում մեծ հեղինակություն ունի Յուտլանդիայում լույս տեսնող «Jylland-Posten»-ը, որն առավոտյան թերթերից ամենամեծ տպաքանակ ունեցողն է: Այն միակ մարզային թերթն է, որ դուրս է եկել տարածաշրջանային շուկայից և ստեղծել համազգային տարածման համակարգ:

Յյուսիսային Եվրոպայի երկրների թերթային համակարգի առանձնահատկություններին կարելի է դասել՝

1. կուսակցական պարբերականների համազգային տարածումը և չմիավորված հրատարակչությունների շրջանային բնույթը,
2. կուսակցական թերթերի շահույթի կրճատումը և համազգային թերթերի տպաքանակի աճը:

Յյուսիսային երկրների մամուլը շատ կախված է գովազդից: Մինչև 80-ական թթ. թերթերը տեղեկատվության տարածման համար գովազդատուների հիմնական միջոցն էին:

Յյուսիսային երկրների ռադիոհեռուստաընկերությունների վարած ծրագրային քաղաքականության գործունեության սկզբունքներն ու արժեքներն են՝

-բնակչության բոլոր խմբերի համար նախատեսված տարաբնույթ ծրագրերի առկայություն,

- ծրագրերի զգալի մասը սեփական արտադրության են,
- արվեստի ազգային գործիչների և վարպետների ստեղծագործությունների օգտագործում ծրագրերում,
- պետությունից, քաղաքական կուսակցություններից և տնտեսական ուժերից անկախություն,
- երկրի ամբողջ բնակչության համար համընդհանուր և տեխնիկական համահավասար հնարավորությունների ստեղծում:
Սկանդինավյան երկրների հեռուստատեսության ընդհանուր գծերն են.

- 55-60%-ը ազգային, հիմնականում՝ վավերագրական ծրագրեր են հեռարձակվում, ընդ որում՝ մեծ մասը հեռարձակում են հեռարձակող ընկերությունների կողմից,

- հայրենական ալիքների գերիշխում, հայրենական ֆիլմերը և հեռուստածրագրերը հանդիսատեսին հասնում են պետական հանրային հեռարձակող ընկերությունների համազգային ալիքներով,

- ազգային շուկայում հեռուստածրագրերի սահմանափակում. հյուսիսային երկրների արտադրության տարաբնույթ ժանրերի հեռուստածրագրերը հազվադեպ են արտահանվում այլ երկրներ:

Սկանդինավյան երկրների հեռուստատեսության ծրագրային քաղաքականության «թույլ» կողմը գեղարվեստական ֆիլմերն ու ժամանցային ծրագրերն են: Հեռարձակվող ծրագրերի միայն մեկ երրորդն է սեփական ազգային հեռուստաընկերությունների արտադրության: Գլխավոր պատճառը դրանց թանկությունն է: Միայն Ֆինլանդիայում է թույլատրվում հանրային հեռուստաընկերության համար մասնավոր կապիտալ: Այնտեղ հավասար հիմունքներով նույն ալիքով հեռարձակվում են հանրային և կոմերցիոն հեռուստաընկերությունների ծրագրերը:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ինչպիսի՞նք են Սկանդինավյան երկրների ժուռնալիստիկայի զարգացման պատմությունը:

2. Բնութագրել Սկանդինավյան երկրների առաջին պարբերականները:

3. Ներկայացնել Սկանդինավյան երկրներում ընդունված մամուլի մասին օրենքները:

4. Որո՞նք են համարվում Սկանդինավյան երկրների պարբերական մամուլի տարբերակիչ առանձնահատկությունները:

5. Բնութագրել Սկանդինավյան երկրների ժամանակակից ՁԼՄ-ների կառուցակարգը:

6. Անվանել Սկանդինավյան երկրների հիմնական որակական և զանգվածային հրատարակչությունները: Բնութագրել դրանք:

7. Որո՞նք են հանդիսանում այդ ՁԼՄ-ների ֆինանսավորման հիմնական աղբյուրները:

8. Անվանել Սկանդինավյան երկրների հիմնական թերթային-հրատարակչական կոնցեռնները:

9. Ինչպիսի՞նն են Սկանդինավյան թերթերի գործունեության քաղաքական և տնտեսական առանձնահատկությունները:

10. Վերջին տարիների Սկանդինավյան երկրների ՁԼՄ-ների զարգացման կարևոր միտումները:

11. Ներկայացնել Սկանդինավյան երկրների ռադիոհեռարձակման և հեռուստատեսության ստեղծման պատմությունը:

12. Բնութագրել Շվեդիայի, Ֆինլանդիայի, Նորվեգիայի, Իսլանդիայի և Նիդեռլանդների ՁԼՄ-ների արդի վիճակը:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՍԱՆԵՐ

1. Բանավոր և գրավոր հաղորդակցությունների զարգացումը Հին Հունաստանում և Հռոմում:
2. Անտիկ փիլիսոփաների (Պլատոն, Արիստոտել, Ցիցերոն) հայացքները հասարակական կյանքում հաղորդակցության դերի շուրջ:
3. Հռետորական արվեստի դերը անտիկ հասարակության մեջ:
4. Հին Չինաստանի նախաժողովրդական երևույթները:
5. Անտիկ դարաշրջանի և Միջնադարի ձեռագիր գրքերը, դրանց սոցիալական դերակատարությունը և պատրաստման առանձնահատկությունները:
6. Միջնադարյան ձեռագիր հրատարակություններն որպես առաջին տպագիր թերթերի նախատիպեր:
7. Յոհան Գութենբերգի հայտնագործած տպագրական հաստոցը և դրա նշանակությունը զանգվածային հաղորդակցության զարգացման գործընթացում:
8. Եվրոպական ռեֆորմի ժամանակաշրջանի հրապարակախոսությունը:
9. Պարբերական մամուլի ծնունդը եվրոպական երկրներում (ըստ ցանկության որևէ երկրի օրինակով):
10. Գրաքննության առաջացման պատճառները և հետևանքները Արևմտյան Եվրոպայում:
11. Անգլիական բուրժուական հեղափոխության ազդեցությունը անգլիական տպագիր մամուլի զարգացման վրա (1640-1660 թթ.):
12. Մամուլի ազատության խնդիրը անգլիական բուրժուական հեղափոխության առաջատար հրապարակախոսների աշխատություններում:
13. Բալզակի լրագրողական գործունեությունը:
14. Ժորժ Սանդը և «Review Independent»-ը:
15. Ստենդալի լրագրողական գործունեությունը:
16. Ֆրանսիական լրագրությունը Օնորե դե Բալզակի «Մենագրություն ֆրանսիական լրագրության մասին» աշխատության մեջ:
17. Անատոլ Գրանսի գրականագիտական դիմանկարները:
18. Գի դը Մոպասանի լրագրողական գործունեությունը:
19. «Sekoli» («Դար») միլանական թերթը:
20. Լրագրության թեման Գի դը Մոպասանի «Սիրելի բարեկամ» վեպում:
21. Էմիլ Զոլայի հրապարակախոսական և լրագրողական գործունեությունը:

22. Ակնարկի ժանրը Սարկ Տվենի ստեղծագործություններում:
23. Օսկար Ուայլդի ակնարկագրությունը՝ էսսեիստիկան:
24. Ակնարկի ժանրը Չարլզ Դիքքենսի ստեղծագործություններում:
25. Վոլտերի հակակղերական հրապարակախոսությունը:
26. 17-18-րդ դարերի ֆրանսիական տպագիր համակարգի ձևավորման առանձնահատկությունները:
27. Մամուլի ազատության հիմնախնդիրը եվրոպական լուսավորիչների աշխատություններում:
28. Առաջին լրատվական գործակալությունները:
29. EFE լրատվական գործակալությունը:
30. 18-րդ դարի Գերմանիայի գրականագիտական ամսագրերը:
31. Էմիլ դե ժիրարդենի լրագրողական գործունեությունը:
32. «Թայմսի» ստեղծման պատմությունը:
33. Գովազդ և ՁԼՄ-ներ, ստեղծման պատմությունը: Հանրային կապեր:
34. 19-րդ դարի պատկերազարդ հրատարակությունների պատմությունը:
35. 18-19-րդ դարերի կանանց համար նախատեսված պարբերականները:
36. 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ռազմական ռեպորտաժի զարգացումը:
37. Ալֆրեդ Հարմսֆորթի հրատարակչական գործունեությունը:
38. 17-րդ դարի ֆրանսիական մամուլը:
39. 17-րդ դարի անգլիական մամուլը:
40. 18-րդ դարի Մեծ Բրիտանիայի մամուլը. իշխանություն/պառլամենտ և լրագրություն կապը:
41. «Թայմսի» գործունեությունը 20-րդ դարում:
42. Ռադիոյի և հեռուստատեսության գյուտը:
43. Սարկ Տվենի լրագրողական գործունեությունը:
44. 19-րդ դարի ԱՄՆ ժուռնալիստիկան. փեմնի-փրեսի պատմությունը:
45. «Sun» պարբերականը:
46. «The Guardian» պարբերականը:
47. «Daily Mirror» պարբերականը:
48. «The Independent» պարբերականը:
49. «The New York post» պարբերականը:
50. «Le Mond» պարբերականը:
51. Ավստրիական էլեկտրոնային ՁԼՄ-ները:

- 52. Նորվեգիայի ՁԼՄ-ները:
- 53. Շվեդիայի ՁԼՄ-ները:
- 54. Ֆինլանդիայի ՁԼՄ-ները:
- 55. Դանիայի ՁԼՄ-ները:
- 56. Իսլանդիայի ՁԼՄ-ները:
- 57. Իսպանական հեռուստատեսությունը և ռադիոն:
- 58. Իտալական հեռուստատեսությունը և ռադիոն:
- 59. Դեղին մամուլ:
- 60. Քարոզչության մեթոդները Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին:

ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍԵՐ

Հարց 1. Թարգմանաբար ի՞նչ է նշանակում «Ցյանսուէբաու» թերթի անվանումը:

- 1. Պետության հզորացման թերթ
- 2. Ժամանակի ոգի
- 3. Ժողովրդական թերթ
- 4. Եղանակների երկիր

Հարց 2. Թարգմանաբար ի՞նչ է նշանակում «Շիուբաու» թերթի անվանումը:

- 1. Ժողովրդական թերթ
- 2. Պետության հզորացման թերթ
- 3. Ժամանակի ոգի
- 4. Եղանակների երկիր

Հարց 3. 19-րդ դարի առաջին կեսին ովքե՞ր էին բրիտանական Չնդկաստանում «Նորություններ» թերթի հրատարակիչները:

- 1. Ժան Ժորեսին և Կորեյը
- 2. Ռամ Մոխսան Ռոյը և Կլակը
- 3. Կորեյը և Դավիթ Սառնոլը
- 4. Կորեյը և Կլակը

Հարց 4. Ովքե՞ր են մշակել ժամանակակից վիետնամական գիրը

- 1. Ֆրանսիական միսիոներները
- 2. Չինացիները

3. Յոհան Գութենբերգը
4. Թեդ Թյորները

Հարց 5. Թարգմանաբար ի՞նչ է նշանակում «Նագարավատա» թերթի անվանումը:

1. Ժողովրդագրական թերթ
2. Պետության հզորացման թերթ
3. Եղանակների երկիր
4. Ժամանակի ոգի

Հարց 6. Ո՞վ է համարվում էլեկտրամագնիսական լամպի գյուտի հեղինակը:

1. Ռամ Սոխան Ռոյը
2. Թեդ Թյորները
3. Յոհան Գութենբերգը
4. Լի դե' Ֆորեսթը

Հարց 7. Որտե՞ղ և ո՞ր թվականին է հիմնադրվել Բրիտանական հաղորդագրական կորպորացիան:

1. 1945 թ. Գերմանիայում
2. 1923 թ. Մեծ Բրիտանիայում
3. 1965 թ. Փարիզում
4. 1985 թ. Բուենոս Այրեսում

Հարց 8. Ո՞ր թվականը ԱՄՆ-ի հեռուստատեսային պատմության համար դարձավ զագաթնակետ:

1. 1986 թ.
2. 1945 թ.
3. 1956 թ.
4. 1939 թ.

Հարց 9. Նշվածներից ո՞րն է Ամերիկայի ռադիոկորպորացիայի նախագահ Դավիդ Սառնովի միտքը:

1. «Իսկ հիմա մենք ձայնին ավելացնում ենք թերթը»:
2. «Իսկ հիմա մենք պատկերին ավելացնում ենք ձայնը»:
3. «Իսկ հիմա մենք ձայնին ավելացնում ենք պատկերը»:
4. «Իսկ հիմա մենք գաղափարին ավելացնում ենք կարծիքը»:

Ֆարց 10. 16-17-րդ դարերում պարբերական մամուլը դրսևորվում է հետևյալ 3 հիմնական տեսակերով:

1. ձեռագիր թերթիկներ, հանդես, օրաթերթ
2. հանդես, օրաթերթ, շաբաթաթերթ
3. ավանախ, օրաթերթ, ամսագիր
4. շաբաթաթերթ, օրաթերթ, ամսագիր

Ֆարց 11. 19-րդ դարում տեղի է ունենում արևմտյան մամուլի բաժանումը:

1. որակականի և զանգվածայինի
2. զանգվածայինի և դեղինի
3. բուլվարականի և զանգվածայինի
4. որակականի և տպագիրի

Ֆարց 12. Ե՞րբ է ստեղծվել Times պարբերականը:

1. 1788 թ.
2. 1785 թ.
3. 1588 թ.
4. 1997 թ.

Ֆարց 13. Նշվածներից ո՞րն է համարվում անգլիական առաջին որակական պարբերականը:

1. «Times»
2. «Daily Curant»
3. «English Mercury»
4. «Sun»

Ֆարց 14. Նշվածներից ո՞րը որակական թերթերի շարքին չի դասվում:

1. «Financial Times»
2. «Guardian»
3. «Mirror»
4. «Independent»

Ֆարց 15. Տասնյակ տարիներ թաբլոիդյան որ թերթն էր առաջատար:

1. «Daily Express»
2. «Daily Mail»
3. «Sun»
4. «Daily Mirror»

Հարց 16. Today-ը համարվում էր

1. որակական թերթ
2. առաջատար թաբլոիդ
3. համազգային զանգվածային օրաթերթ
4. համազգային հանդես

Հարց 17. Ո՞վ է հիմնադրել «Ռեյթեր» բրիտանական լրատվական գործակալությունը

1. Պոլ Լազերսֆիլդը
2. Ռուպերտ Մերդոկը
3. Պոլ Յուլիոս Ռեյթեր
4. Թեոֆրասո Ռենդոն

Հարց 18. Ո՞վ է «Յուլանիտե» օրաթերթի խմագիրը

1. Թեոֆրասո Ռենդոն
2. Պոլ Յուլիոս Ռեյթերը
3. Ժան Ժորեսին
4. Պոլ Լազերսֆելդը

Հարց 19. Թարգամանաբար ի՞նչ է նշանակում «Մոնդ» թերթի անվանումը:

1. Կյանք
2. Եղանակների երկիր
3. Քաղաքային լրատու
4. Աշխարհ

Հարց 20. Ֆրանսիական մամուլում ո՞ր օրաթերթն էր առանձնանում թեմատիկայի բազմազանությամբ, նկարազարդմամբ, նյութերի մատուցման գրավիչ ձևերով:

1. «Պարի-Սուար»
2. «Յուլանիտե»
3. «Մոնդ»
4. «Պետի Փարիզյեն»

Հարց 21. Նշված թերթերից ո՞րը չի համարվում ֆրանսիական տնտեսական բնույթի թերթ:

1. Տրիբյուն
2. Պարի-Սուար

3. Էկո
4. Պարի Մատչ

Հարց 22. Ե՞րբ են Հյուսիսային Ամերիկայում ի հայտ եկել տպագրական առաջին մեքենաները:

1. 1758 թ.
2. 1600 թ.
3. 1588 թ.
4. 1638 թ.

Հարց 23. Ինչպե՞ս է կոչվել ամերիկյան առաջին թերթը:

1. «Բոսթոնի նորությունների թերթիկ»
2. «Հասարակական իրադարձությունների տեղեկագիր»
3. «Արտասահմանյան և հասարակական իրադարձությունների տեղեկագիր»
4. «Արտասահմանյան և տեղական հասարակական իրադարձություններ»

Հարց 24. Ու՞մ նախաձեռնությամբ է տպագրվել «Արտասահմանյան և տեղական հասարակական իրադարձություններ» թերթը

1. Ուիլյամ Բրուքեր
2. Էնդրյու Բրեդֆորդ
3. Բենջամին Հարիս
4. Ջեյմս Ֆրանկլին

Հարց 25. «Արտասահմանյան և տեղական հասարակական իրադարձություններ» թերթը երկար կյանք չունեցավ, քանի որ

1. թերթն ընդդիմադիր կեցվածք ուներ:
2. բացակայում էր նահանգապետի հրամանագիրը:
3. բացակայում էր համապատասխան արտոնագիրը և թերթում հաղորդվում էին ոչ ստույգ, կասկածելի նորություններ:
4. թերթն գաղութատերերի խոսափողն էր դարձել:

Հարց 26. Ո՞վ էր «Բոսթոնի նորությունների թերթիկ» օրաթերթի խմբագիրը

1. Սեմյուել Ադամսը
2. Բենջամին Հարիսը
3. Ջեյմս Ֆրանկլինը
4. Ջոն Զեմբելը

Հարց 27. Նշվածներից ո՞ր թերթի խմբագիրն էր Ուիլյամ Բրուքերը

- 1.«Բոսթոնյան թերթ»
- 2.«Բոսթոնի նորությունների թերթիկ»
- 3.«Թոսթոն քայմս»
- 4.«Ամերիկյան շաբաթական մերկուրի»

Հարց 28. «Նոր ամերիկյան դոկանջներ» թերթի ծնունդը նշանավորեց ամերիկյան ժուռնալիստիկայի նոր շրջանը, քանի որ

1. այն դարձավ պետական հսկողությունից ազատ առաջին թերթը:
2. այն տպագրում էր միայն հայտարարություններ:
3. այն տպագրում էր առավել պրոֆեսիոնալ լրագրողական ստեղծագործություններ:
4. այն տպագրում էր միայն գովազդներ:

Հարց 29. Նշվածներից ո՞ր պարբերականի խմբագիրն էր Ուիլյամ Բրեդֆորդը

1. «Փենսիլվանիական թերթ»
2. «Նյու Վաշինգտոն»
3. «Նյու յորքյան թերթ»
4. «Գերմանական քաղաքային թերթ»

Հարց 30. Ինչո՞ւ 1722 թվականին Ջեյմս Ֆրանկլինին բանտարկեցին

1. նահանգապետի հասցեին հնչեցրած քննադատությունների համար:
2. հայտարարություններ տպագրելու համար:
3. ընդդիմադիրներին աջակցելու համար:
4. բազում տպագրական սխալներ և ոչ ստույգ ինֆորմացիա տպագրելու համար:

Հարց 31. Ի տարբերություն եվրոպական մամուլի զարգացման առանձնահատկությունների, Լատինական Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի առաջին պարբերականները

1. հայտնվել են արտաքին գործոնի՝ եվրոպական բռնատիրությունների զաղութային ռեժիմի ազդեցության տակ:
2. ենթարկվել են խիստ գրաքննության:
3. բազմացվում էին ձեռագիր տարբերակով:
4. աջակցում էին ընդդիմադիր ուժերին:

Չարց 32. Ո՞րն է համարվում Լատինական Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի երկրների ժուռնալիստիկայի զարգացման ընդհանուր առանձնահատուկ գիծը:

1. Ընդդիմադիր մամուլի բացակայությունը:
2. Ֆրանսալեզու մամուլը:
3. Անգլալեզու մամուլը:
4. Մամուլի երկու հակամարտող ջոկատների առկայությունը:

Չարց 33. Գաղութատիրական մամուլը

1. հանդես էր գալիս գաղութատերերի և նրանց կողմից իրականացվող քաղաքականության կողմից
2. հանդես էր գալիս բնիկների կողմից
3. հանդես էր գալիս միսիոներների կողմից
4. հանդես էր գալիս որպես մեծ տերությունների խոսափող

Չարց 34. Նշված պարբերականներից որը չի դասվում գաղութատերերի համար հրատարակություններին թվին

1. Լա գազետ դե՛ Մեխիկո նացիաս դե՛ նուեվա Իսպանիա
2. Նագարավատա
3. Լա գազետ դե՛ Գվատեմալա
4. Լա գազետ դե՛ Լիմա

Չարց 35. Նշվածներից ո՞ր պնդումն է ճիշտ

1. «Լա կուրիեր դե Եգիպտ» թերթը լույս էր տեսնում ֆրանսիացիների, գլխավորապես՝ Նապոլեոնի բանակի զինվորականների համար:
2. «Լա կուրիեր դե Եգիպտ» թերթը համարվում է առաջին եգիպտական պարբերականը:
3. «Լա կուրիեր դե Եգիպտ» թերթը համարվում է ամենահեղինակավոր եգիպտական պարբերականը:
4. «Լա կուրիեր դե Եգիպտ» թերթը համարվում է ֆրանսիական գաղութատիրական մամուլի ընդդիմադիր ներկայացուցիչ:

Չարց 36. Նշվածներից ո՞րը գաղութատերերի կողմից ստեղծված պարբերական հրատարակությունների հիմնական խմբին չի պատկանում

1. Բարձրաշխարհիկ հրատարակություններ բնիկների համար:
2. Հրատարակություններ գաղութատերերի համար:
3. Հրատարակություններ ֆրանսիացիների համար:
4. Կրոնական, առաքելական կամ միսիոներական մամուլ բնիկների համար:

Հարց 37. Ո՞ր երկրից է սկսել համաշխարհային մամուլի զարգացումն ու տարածումը

1. Ֆրանսիա
2. Գերմանիա
3. Անգլիա
4. Լատինական Ամերիկա

Հարց 38. Ինչպե՞ս է կոչվել գերմանական առաջին օրաթերթը

1. «Լայպցիգեր Ցայթունգ»
2. «Ռեյաթիոն»
3. «Ֆոլկաշտաուտ»
4. «Ֆոլկիշեր Բեոբախթեր»

Հարց 39. Նշվածներից ո՞րն էր Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության օրգանը

1. «Ֆոլկաշտաուտ»
2. «Ֆոլկիշեր Բեոբախթեր»
3. «Լայպցիգեր Ցայթունգ»
4. «Ռեյաթիոն»

Հարց 40. Նշվածներից ո՞ր թերթի անվանումն է գերմաներենից թարգմանաբար նշանակում «ժողովրդական դիտորդ»

1. «Լայպցիգեր Ցայթունգ»
2. «Ֆոլկաշտաուտ»
3. «Ֆոլկիշեր Բեոբախթեր»
4. «Ռեյաթիոն»

Հարց 41. Ինչպիսի՞ առանձնահատկություն ունի այսօրվա գերմանական մամուլը

1. Առավոտյան թերթերի գերակշռումը և հրատարակությունների վառ դրսևորված տարածաշրջանային բնույթ:
2. Երեկոյան թերթերի գերակշռումը և հրատարակությունների վառ դրսևորված տարածաշրջանային բնույթ:
3. Կիրակնօրյա թերթերի գերակշռումը և հրատարակությունների վառ դրսևորված տարածաշրջանային բնույթ:
4. Երեկոյան թերթերի գերակշռումը և հրատարակությունների վառ դրսևորված ընդդիմադիր բնույթ:

Չարդ 42. Ինչո՞վ է պայմանավորված այն, որ գերմանական պարբերականների 95%-ը տեղական թերթեր են

1. Երկրի բազմադարյան ֆեոդալական մասնատվածությամբ:
2. Ընթերցողների մեծամասնությունը գերմանացիներ են:
3. Պարբերականների մեծ մասը ցրվում են Գերմանիայում:
4. Հայտարարությունների և գովազդի համամասնությամբ:

Չարդ 43. Ո՞ր երևույթների առկայությունը Գերմանիայի թերթ-ամսագրային շուկայում էական փոփոխություններ առաջ բերեց

1. Բեռլինյան պատի անկումը և երկու գերմանական պետությունների միավորումը:
2. Երկու գերմանական պետությունների միավորումը և գրատպության հայտնագործումը:
3. Գրատպության հայտնագործումը և ամսագրերի մեծ տպաքանակը:
4. Գերմանական առաջին օրաթերթերի և ամսագրերի ի հայտ գալը:

Չարդ 44. Նշվածներից ո՞րը գերմանական լրատվական գործակալությունն է

1. Դոյչեր դե՛ Դեշենդիատ
2. Դոյչե Պրեսսե Ագենտուր
3. Ֆոլկաշտաուտ
4. Նորությունների կաթոլիկական գործակալություն

Չարդ 45. Իտալական օրաթերթերը մեծ տպաքանակ չունեն, փոխարենը

1. Շատ մեծ տպաքանակ ունեն ամսագրերը
2. Շատ են թաբլոիդները
3. Շատ են ռադիոկայանները
4. Շատ են շաբաթաթերթերը

Չարդ 46. Նշված տարբերակներից ո՞րը ժամանակակից իսպանական թերթերի խմբին չի պատկանում

1. Պետական
2. Անկախ-մասնավոր
3. Կուսակցական
4. Համազգային

Չարդ 47. Նշվածներիդ ո՞րն է իսպանական առաջին թերթը (1661 թ.)

1. «Էլ Մունդո»
2. «Վանգուարդիա»
3. «Գազետա Նուեվա դե Մադրիդ»
4. «Դիոարո դե Մադրիդ»

Չարդ 48. Ինչպե՞ս է կոչվել լեհական առաջին թերթը

1. «Բելգիա»
2. «Մերկուրիում»
3. «Մերկուրիում Պոլսկի»
4. «Դիարո դի Նուրիսխալ»

Չարդ 49. Ո՞ր քաղաքի հետ է կապված ամերիկյան մամուլի ծնունդը

1. Բոսթոն
2. Կանադա
3. Մասաչուսեթս
4. Նյու Յորք

Չարդ 50. Նշված թերթերիդ ո՞րն է New York Sun-ի մրցակիցը

1. Daily Mirror
2. New York Herald
3. The Times
4. The Guardian

Չարդ 51. Ու՞մ միջոցով Ամերիկայում սկսեց զարգանալ բուլվարային մամուլը

1. Յորաքիոս Գրիլլի
2. Ուիլյամ Յերսթի
3. Ջոզեֆ Պուլիտցեռի
4. Ջեյմս Գորդոն Բեննեթի

Չարդ 52. Նշված հրատարակիչներիդ ո՞վ մերժեց բեննեթյան ոճի ժուռնալիզմը

1. Էնդրյու Բրեդֆորդը
2. Ջոզեֆ Պուլիտցեռը
3. Ուիլյամ Յերսթը
4. Յորաքիոս Գրիլլին

Հարց 53.Նշվածներից ո՞ր թերթն է ստեղծել Հորացիուս Գրիլին

1. New York Tribune
2. USA today
3. Time
4. New York Herald

Հարց 54. Նշվածներից ո՞ր թերթն է ԱՄՆ պետական թերթերի նախատիպը

1. New York Herald
2. Sun
3. Daily Express
4. New York Tribune

Հարց 55. Ու՞մ անունն է այսօր կրում ԱՄՆ բարձրագույն ժուռնալիստական պարզևը

1. Ուիլյամ Յերսթի
2. Ջոզեֆ Պուլիտցեռի
3. Էնդրյու Բրեդֆորդի
4. Հորացիուս Գրիլիի

Հարց 56. «New York World» թերթը

1. Այն ժուռնալիստիկայի մոդելն էր, որն հիմնված էր մարդկային ռեպորտաժների և միջադեպերի լուսաբանման վրա:
2. Այն ժուռնալիստիկայի մոդելն էր, որն հիմնված էր ընդդիմադիր հրատարակությունների տպագրման վրա:
3. Այն ժուռնալիստիկայի մոդելն էր, որն հիմնված էր լրատվական գործակալությունների համար նյութերի պատրաստման վրա:
4. Այն ժուռնալիստիկայի մոդելն էր, որն հիմնված էր հայտարարությունների ու գովազդների պատրաստման վրա:

Հարց 57. Լսարանն ընդլայնելու համար ինչպիսի՞ հմարանք կիրառեց Պուլիտցեռը

1. Պատկերազարդումներ, ծաղրանկարներ և սենսացիաներ:
2. Սենսացիաներ և գովազդներ:
3. Հայտարարություններ և պարզեցված գերմաներեն:
4. Պարզեցված անգլերեն, նկարներ, կոմիքսներ, սենսացիաներ:

Հարց 58. Նշվածներից ո՞վ է ամերիկյան ժուռնալիստիկայի երկրորդ խոշոր դեմքը

1. Ռուպերտ Մերդոկը
2. Յորաջիուս Գրիլին
3. Ուիլյամ Յերսթը
4. Ռոբերտ Մաքսվելը

Հարց 59. Ուիլյամ Յերսթի անունը խորհրդանշում է

1. Ամերիկյան կապիտալիստական ժուռնալիստիկայի բացասական կողմերը
2. Անհատական ժուռնալիզմի դրական կողմերը
3. Ամերիկյան արդի ժուռնալիստիկայի նորագույն շրջանը
4. Թաբլոիդների առաջացումը

Հարց 60. Ո՞ր թվականին է ամերիկյան մամուլում հայտնվել թաբլոիդը

1. 1995թ.
2. 1965 թ.
3. 1919 թ.
4. 1875թ.

Հարց 61. Ի՞նչ է թաբլոիդը

1. Ամսագիր
2. Ամսագրի տեսակ
3. Էժանագին մամուլի տեսակ
4. Հանդես

Հարց 62. Ինչո՞վ է առանձնանում թաբլոիդը

1. Գովազդային հայտարարություններով
2. Վերլուծական մեծածավալ հրատարակություններով
3. Տեղեկատվական բազմաբնույթ նյութերով
4. Փոքրացված ծավալով, կիսատ ֆորմատով և առաջին էջով մեկ տեղադրված լուսանկարով

Հարց 63. Նշվածներից ո՞րն էր դարձել առաջին ամերիկյան թաբլոիդը

1. «Sun»
2. «New York Daily News»

3. «Evening Post»
4. «Star»

Չարց 64. Ինչպե՞ս է կոչվել 1923 թ. մարտին Նյու Յորքում հայտնված առաջին նորությունների ամսագիրը

1. Age
2. USA today
3. Time
4. Life

Չարց 65. Ինչո՞վ էր պայմանավորված 1950-60 ական թթ. ամերիկյան թերթերի ճգնաժամ ապրելը

1. Այն կապված էր շատ ընթերցողների վստահության կորստի, հեռուստատեսության ընդլայնման և ֆինանսական դժվարությունների հետ:
2. Այն կապված էր տեխնիկական դժվարությունների հետ:
3. Այն կապված էր անգրագետ ընթերցողական լսարանի հետ:
4. Այն կապված էր թղթի թանկության հետ:

Չարց 66. Ինչպիսի՞ առանձնահատկություններով էր օժտված «USA today» թերթը

1. Այն հարուստ էր վառ, գունավոր նկարազարդումներով և խոշոր վերնագրերով:
2. Այն հարուստ էր գունազարդ հայտարարություններով:
3. Այն հարուստ էր գովազդներով:
4. Այն հարուստ էր սեմսացիաներով և կոմիքսներով:

Չարց 67. Ամերիկայի թերթերից ո՞րն էր աչքի ընկնում հետաքրքիր էջադրմամբ

1. «Time»
2. «Evening Post»
3. «Life»
4. «USA today»

Չարց 68. «Նոր ժուռնալիզմի» ներկայացուցիչների կարծիքով

1. Ժամանակը հավաստի պատկերել կարելի է գեղարվեստական հնարանքների օգնությամբ:
2. Էլեկտրոնային լրատվամիջոցները նոր ժուռնալիստիկայի ապագան են:

3. Առցանց լրատվամիջոցներին ոչինչ չի կարող փոխարինել:
4. Թերթը պիտի ավելի շատ վերլուծություններ տպագրի, այլ ոչ թե տեղեկատվական նյութեր:

Հարց 69. Ինչո՞վ է բացատրվում այն հանգամանքը, որ ասիական տարածաշրջանի թերթերի մեծ մասը շարունակում են ետ մնալ ԱՄՆ և եվրոպական խոշոր թերթերից

1. Պատճառը ԱՄՆ-ից ու եվրոպական երկրներից հեռու լինելն է:
2. Պատճառը տնտեսական բազայի թուլությունն է, կատարելագործված կադրերի պակասը, թերթի թղթի թանկությունը
3. Պատճառը ասիական տարածաշրջանում խիստ գրաքննադատությունն է:
4. Պատճառը ազատամիտ խմբագիրների պակասն է:

Հարց 70. Թաբլոիդները տպագրում են ոչ թե ավանդական A2 ֆորմատի, այլ

1. Երկու անգամ փոքր A3 ֆորմատի վրա
2. Մեկ անգամ փոքր A3 ֆորմատի վրա
3. A4 ֆորմատի վրա
4. A6 ֆորմատի վրա

Հարց 71. Նշված պնդումներից ո՞րը չի վերաբերում թաբլոիդների առանձնահատկություններին

1. Փոքրածավալ հոդվածներ:
2. Պատկերազարդումների մեծ քանակ:
3. Քաղաքական բնույթի բազմաթիվ վերլուծություններ:
4. Մեծ տառատեսակով՝ աչք ծակող վերնագրեր:

Հարց 72. Ո՞ր երկրի ազդեցությունն է մեծ ավստրիական մամուլի վրա:

1. Ֆրանսիական
2. Շվեդական
3. Շվեյցարական
4. Գերմանական

Հարց 73. Ավստրիան առաջին եվրոպական երկիրն է, որը 1980 թ.

1. սկսել է խուլ ու համրերի համար հեռուստահաղորդումներ պատրաստել:

2. սկսել է տելետեքստով կանոնավոր հեռուստահաղորդումներ հեռարձակել:

3. առանձնացրել է հեռուստահաղորդումներն ըստ տարիքային խմբերի պատկանելության:

4. սկսել է ուղիղ եթերով հեռուստահաղորդումների հեռարձակումը:

Չարդ 74. Նշվածներից ո՞րն է իսպանական հայտնի մարզական օրաթերթ

1. «El Presse»

2. «El Mundo»

3. «Marca»

4. «Le Monde»

Չարդ 75. Ինչպիսի՞ երևույթների դեմ էր հանդես գալիս New York Tribune թերթը

1. Այն հանդես էր գալիս գրաքննվող մամուլի դեմ՝ հանուն խոսքի ազատության:

2. Այն հանդես էր գալիս ընդդիմադիր մամուլի դեմ՝ հանուն ազատամտության:

3. Այն հանդես էր գալիս անբարոյական և անկուսակալ մամուլի դեմ՝ հանուն հասարակական շահերի և արդարության:

4. Այն հանդես էր գիտական հրապարակումների դեմ՝ հանուն իրական լրատվության տարածման:

Չարդ 76. «USA today»-ը

1. Անգլիայի պատմության մեջ առաջին ազգային համաքաղաքական թերթն էր:

2. ԱՄՆ պատմության մեջ առաջին ազգային համաքաղաքական թերթն էր:

3. ԱՄՆ պատմության մեջ առաջին միջազգային համաքաղաքական թերթն էր:

4. ԱՄՆ պատմության մեջ առաջին ընդդիմադիր թերթն էր:

Չարդ 77. «Ղեղին պատանի» մականունը կրող կոմիկական հերոսի շարունակական նկարները ո՞ր թերթի էջերում հայտնվեցին

1. New York World

2. New York Tribune

3. Le Monde

4. Herald

Հարց 78. Ինչո՞վ էր ընթերցողներին զվարճացնում «Դեղին պատանի»-ին

1. Տգեղ արտաքինով, տարբեր թեմաների վերաբերյալ սենսացիոն դատողություններով:

2. Իր լուրջ կեցվածքով, տարբեր թեմաների վերաբերյալ խորաթափանց դատողություններով և արտառոց գործողություններով:

3. Իր դեղին գույնի արտաքինով և հումորների շարքով:

4. Իր ծիծաղելի արտաքինով, հիմար ծիծաղով, տարբեր թեմաների վերաբերյալ կոմիկական դատողություններով և արտառոց գործողություններով:

Հարց 79. Պուլիտցեռի մտցրած թերթային նորամուծությունը հանգեցրեց

1. «New York Tribune» թերթի հիմնադրմանը:

2. Պուլիտցեռյան մրցանակի առաջացմանը:

3. «Դեղին մամուլ» տերմինի առաջացմանը:

4. ԱՄՆ առաջին նորությունների ամսագրի տպագրմանը:

Հարց 80. Առանձնահատուկ ուշադրություն է գրավում Մոնդոլիայի ժուռնալիստիկան,

1. որի կենտրոնական մամուլը ներկայացված է պետական կուսակցական մասնավոր հրապարակումներով:

2. որի կենտրոնական մամուլը ներկայացված է ընդդիմադիր կուսակցական մասնավոր հրապարակումներով:

3. որի մամուլը ներկայացված է հակապետական գաղափարներ քարոզող հրապարակումներով:

4. որտեղ իսպառ բացակայում են սեփական թղթակիցները:

ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍԵՐԻ ԳԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Թեստի համար	Ճիշտ պատասխան						
1	1	21	2	41	1	61	3
2	3	22	4	42	1	62	4
3	4	23	4	43	1	63	2
4	1	24	3	44	3	64	3
5	3	25	3	45	1	65	1
6	4	26	4	46	4	66	1
7	2	27	1	47	3	67	4
8	4	28	1	48	3	68	1
9	3	29	3	49	1	69	2
10	4	30	1	50	2	70	1
11	1	31	1	51	4	71	3
12	2	32	4	52	4	72	4
13	1	33	1	53	1	73	2
14	3	34	2	54	4	74	3
15	4	35	1	55	2	75	3
16	3	36	3	56	1	76	2
17	3	37	2	57	4	77	1
18	3	38	1	58	3	78	4
19	4	39	2	59	1	79	3
20	1	40	3	60	3	80	1

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հիմնական գրականություն

1. Communities of Journalism: A History of American Newspapers and Their Readers, David Paul Nord, University of Illinois Press, 2001, 293
2. History of the Mass Media in the United States, Margaret A. Blanchard, Routledge, 2013, 784
3. Key Readings in Journalism, Elliot King, Jane Chapman, Routledge, 2012, 424
4. The Fourth Estate: Journalism in Twentieth-Century Ireland, Mark O'Brien, Manchester University Press, 2017 .
5. A History of Mass Communication: Six Information Revolutions, Irving E. Fang, Focal Press, 1997, 280
6. Historical Dictionary of Journalism, Ross Eaman Scarecrow Press, 2009, 432
7. A History of News, Mitchell Stephens, Oxford University Press, 2007 - 356
8. Media history // <http://www.mediahistory.umn.edu/time/century.html>
9. Stephens M. History of newspapers // <http://www.nyu.edu/classes/stephens/Collier's%20page.htm>
10. Белинский В.Г. Размышления по поводу некоторых явлений в иностранной журналистике [Электронный ресурс]. М.: Лань, 2013.
11. Прозоров В.В. Власть и свобода журналистики [Электронный ресурс]. М.: Флинта, 2012. б)
12. Прутцков Г.В. История зарубежной журналистики (1 часть). Под ред. проф. Я.Н. Засурского. М., 2003.

Լրացուցիչ գրականություն

1. Козонкова О.В. История зарубежной журналистики (XIX-XXI вв.). Саратов, 2011. Электронно-образовательный ресурс на сайте ЗНБ СГУ.
2. Ракитина Е.Б. История зарубежной журналистики (Часть 1).

Саратов, 2010. Электронно-образовательный ресурс на сайте ЗНБ СГУ.

3. Англия в памфлете. Английская публицистическая проза начала XVIII века. М.: Прогресс, 1987.

4. Беглов С.И. Четвертая власть: британская модель. История печати Великобритании от «новостных писем» до электронных газет. М.: Изд-во МГУ, 2002.

5. Беспалова А.Г. и др. История мировой журналистики. Учебное пособие. Москва, Ростов-на-Дону: Издательский центр «МарТ», 2004.

6. Ворошилов В.В. История журналистики зарубежных стран: Конспект лекций. СПб: Изд-во Михайлова В.А., 2000.

7. Журналистика западноевропейских стран: Учебное пособие. Под ред. В.С. Соколова. Л.: Изд-во ЛГУ, 1990.

8. История печати. Антология в 2х томах. Сост. Засурский Я. Н., Вартанова Е. Л. Москва 2002.

9. Мкртчян А.А. История журналистики США XVIII-XIX вв.: Пособие по курсу. М., 1995.

10. Прутцков Г.В. Введение в мировую журналистику: Антология в двух томах. М.: Омега-Л, ИМПЭ им. А.С. Грибоедова, 2003.

11. Прутцков Г.В. История зарубежной журналистики 1800-1929. М., 2010.

12. Свитич Л.Г. Профессия: журналист. М.: Аспект пресс, 2003. (Глава «История журналистской профессии»)

13. Трубицына И.В. Зарождение и развитие английских периодических изданий в XVII веке. Учебное пособие. М.: Изд-во МГУ, 1999.

14. Трыков В.П. Зарубежная журналистика XIX века. М., 2004.

15. Соколов В.С. Периодическая печать Франции: Учеб. пособие. СПб., 1998.

16. Соколов В.С., Виноградова С.М. Периодическая печать Великобритании. СПб., 1998.

17. Шарончикова Л.В. Печать Франции. М., 1995. в)

ՁԼՄ խոշոր մեդիակորնցեռնների պաշտոնական կայքէջերը

www.newscorp.com,
www.cbcorporation.com,
www.timewarner.com,
www.WSJ.com,
www.nytimes.com,
www.sueddeutsche.de,
www.faz.net,
www.lemonde.fr

Խոշոր լրատվական գործակալությունների կայքէջերը

<http://thomsonreuters.com>,
www.ap.org,
www.afp.com,
www.dpa.de

ՇՈՒՇԱՆ ՈՌԲԵՐՏԻ ԱՍԿԱՐՅԱՆ

**ԱՐՏԱՍԱՐՄԱՆՅԱՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ**
(Ուսումնամեթոդական ձեռնարկ)

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Համ. շարվածքը և

էջադրումը՝

Գրաֆիկական դիզայնը՝

Կազմի ձևավորումը՝

Թամար Հարությունյանի

Դավիթ Խաչատրյանի

Ռոբերտ Ասկարյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84¹/₁₆:

Ծավալը՝ 6 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում

Հ. Հակոբյան 25

Ստեփանակերտ 2017